№ 56 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 12

1908

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 12 № 56

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար „ „	10 ր.
11 „ „ „ „	„
10 „ „ „ „	9 ր.
9 „ „ „ „	8 ր.
8 „ „ „ „	7 ր.
7 „ „ „ „	6 ր.
6 „ „ „ „	„
Մնացած ամիսները ամսական ՄԷԿ րուբլի	
Ամերիկա տարեկան „	6 դոլլար
Եւրոպա „ „ „	30 ֆրանկ
Պարսկաստան „ „	10 րուբլի

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՒ ԿՈՄԻՍԻՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Առաջարկում է իր ծառայութիւնները դրամագլուխներ հայթայթելու համար արդիւնաբերական և լեռնային ձեռնարկութիւնների գրաւականով։ Իր հաշւով հետազօտել է տալիս իրան առաջարկված իւրաքանչիւր լուրջ գործ։

Հասցէն՝ Banque Denis et C-ie, 33, rue Le Peletier, Парижъ.

(օ. մ.) 10—6

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ կիրակի, մարտի 16-ին, առաւօտեան ժամը 11-ին, նշանակված է աճուրդ՝ դպրոցապատկան քարվանսարայի վերին յարկի կրպակները կապալով տալու համար։ (Սիոնի փող. №13)։

(12, 16) (առ.) 2—1

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ

Այն օրից, որ մահմեդական տարրի մէջ սկսեց երևան գալ ցանկութիւն թօթափելու իրանից տգիտութեան ու նախապաշարմունքի կապանքները և ոտք դնելու լուսաւորութեան ճանապարհի վրա, մենք նկատում ենք, որ գործնական նշանակութիւն է ստանում դպրոցական լեզուի խնդիրը։

Մեր երկրի մահմեդական ազգաբնակութեան խոշոր մասը պատկանում է թիւրքական ցեղին և ուրեմն դպրոցական նպատակների համար կարող է օգտվել թիւրքական լեզուով կազմված գրքերից և ձեռնարկներից։ Եւ թէև թիւրք-թաթարական ցեղը ունի բազմաթիւ բարբառներ, որոնցից մի քանիսը բաւական հեռու են մասսայի խօսած լեզուից, այնուամենայնիւ արմատական բառերի մերձաւորութիւնը տալիս է որոշ աստիճան հնարաւորութիւն օգտվելու թիւրքերէն լեզուով կազմված գրադարանից։

Բայց թիւրք-թաթարական տարրերից դուրս կան մեծ թւով մահմեդական համայնքներ, որոնք բոլորովին ուրիշ ծագում ունեն քան առաջինները և խօսում են իրանց ինքնուրոյն լեզուով։ Այդպէս են Կովկասեան լեռների բազմատեսակ ազգութիւնները, ինչպէս օրինակ լեզգիները, աւարները, չեչենները, չերքեզները, աբխազները, լաքերը, օսերի մի մասը։ Այդպէս են Անդրկովկասի զանազան տեղերում ցրված թաթ, քիւրդ, լազ և ուրիշ ցեղերը։

Այդ ազգագրական տարրերն էլ սկսում են դպրոցների և ձեռնարկների մասին մտածել և շատ անգամ դրված են լինում անելանելի դրութեան մէջ։ Լազերը անշուշտ կարող են օգտվել վրաց գրականութիւնից և օգտվում են. օսերը փորձում են գործունէութեան մէջ դնել իրանց օսական այբուբենը։ Կովկասեան լեռնաբնակներից մի քանիսը յարմարեցնում են արաբական նշանագրերը նամակագրութեան համար, բայց ձեռնարկներ և գրքեր դեռ չունեն իրանց տրամադրութեան տակ. իսկ կրօնական տեսակէտով առաջնորդված՝ սովորեցնում են դպրոցներում իրանց մանուկներին արաբական լեզուն՝ ղուրան և ուրիշ կրօնական գրքեր կարդալու համար։ Յամենայն դէպս այդ ցեղերի մեծագոյն մասը բոլորովին զուրկ է որևէ հնարաւորութիւնից տալու իր զաւակների ձեռքը դիւրամատչելի լեզուով կազմված գրքեր և ձեռնարկներ։

Եւ ահա հերթական է դարձել նրանց համար դպրոցական տարրական կրթութեան նպատակայարմար կազմակերպութեան հարցը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիեննա, 11 մարտի

«Կոր. բիւրոյին» հեռագրում են Կ. Պոլսից.

Այստեղ հաւատացնում են, որ երկրորդ և երրորդ զօրաբանակները ուժեղացնելու մասին տարածված գաղտնի լուրերը իրականութեանը չեն համապատասխանում և հիմնված են Բ. Դրան մտադրութիւնների և վճիռների վերաբերութեամբ ունեցած թերի տեղեկութիւնների վրա։ Յամենայն դէպս Թիւրքիայի զինւորական եռանդուն ձգտումները ուշադրութեան արժանի են և անկասկած բացատրվում են Թիւրքիայի քաղաքական ընդհանուր կացութեամբ, մի քանի չը լուծված միջնադէպերով և հարցերով և Թիւրքիայի՝ ապագայի վերաբերութեամբ ունեցած երկիւղներով։

Իտալիան, մարտի 9-ին, պետութիւններին, Բ. Դրան և տեղիս դեսպանատներին ուղարկեց այն նօտան, որով առաջարկվում է Մակեդոնիայի ժանդարմէրիայի կառավարիչ նշանակել գեներալ-մայոր Ռօբիլանդին։ Բ. Դրան պաշտօնական առաջարկ մեծ պետութիւնների կողմից կը հետևէ միայն այն ժամանակ, երբ կը պարզվի թէ պետութիւնները որ աստիճան համերաշխ են այդ թեկնածութեան հետ։

(«Հ. Գ.»)

Պեկին, 10 մարտի

«Տացումարու» նաւի արձակման հետ միասին հարաւում խոշոր անկարգութիւններ են ծագել։ Հազարաւոր ամբոխը պահանջում է Կանտոնի գեներալ-նահանգապետին հրաժարական տալ։ Եապօնական ապրանքներին յայտարարված է բօյկօտ։ Եապօնացի առևտրականները շտապով հեռանում են Կանտոնից։

Լօնդօն, 11 մարտի

Կանտոնից Րէյտէրի գործակալութեանը հեռագրում են, որ «Տացումարու» նաւը յանձնելու դէմ բողոքելու ժողոված միտինգին ներկայ էին 50,000-ից աւելի մարդ։ Արտասանվեցին կրակոտ ճառեր։ Ճառերը հանեցին վրաներից եապօնական կտորներից կարած շորերը և, գլխարկների ու թաշկինակների հետ կապոց շինած, շպրտեցին մի տեղ և այրեցին։ Որոշվեց պարսաւանք յայտնել Իվանշիկային, որ նա զիջող եղաւ եապօնական պահանջների վերաբերութեամբ։

Նիւ-Եօրկ, 11 մարտի

Տօկիօյից հեռագրում են, որ առաւօտեան, Տօկօղատէի մօտ, «Մացումաբու» նաւը ընդհարվելով մի ուրիշ նաւի հետ, ջրասոյզ եղաւ։ Կապիտանը, 43 նաւաստի և 244 ճանապարհորդներից մեծ մասը խեղդվեցին։

Բագու, 10 մարտի

Թուրքական «Բայլուլ» երգիծաբանական թերթի խմբագիր Ալիէվը, միջազգային բանկում, սխալմամբ, փոխանակագրով ստանալով հայոց «Բարի լոյս» շաբաթաթերթի խմբագրութեանն ուղարկված 3000 րուբլին, անյայտացել է։

(«Т. Л.»)

ԿՈՉ

Սարսափելի թշուառութեան ենթարկվեց Քութայիս քաղաքի հրէայ ազգաբնակութիւնը. Ներկայ տարվայ փետրվարի 22-ի երեկոյեան հրդեհը ոչնչացրեց հրէական թաղի նշանաւոր մասը։ Կրակը լափեց 40-ից աւելի տներ, զանազան շարժական գոյքի, տաւարի և այլն ահագին քանակութիւն։ Վնասը ընդհանուր առմամբ աւելի է քան 260,000 րուբլի։ Անհնար է նկարագրել անտուն և կատարելապէս առանց մի կտոր հացի մնացած 700-ից աւելի մարդկանց տանջանքը։ Անհրաժեշտ է անյապաղ օգնութիւն։

Առաջինը արձագանք տալով թշուառութեանը՝ Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը բարեհաճեց նուիրել անձնական միջոցներից 2000 ր. ի նպաստ հրկիզեալների։

Հրկիզեալներին օգնութիւն հասցնելու համար կազմված մասնաժողովը դիմում է խոնարհ խնդիրքով բոլոր բարի մարդկանց, առանց ազգութեան և դաւանութեան խտրութեան, օգնելու, ով ինչով կարող է, կոյր և անողորմ տարերքի թշուառ զոհերին։

Նուիրատուութիւնները խնդրվում է ուղարկել՝ Քութայիս քաղաքը, Մասնաժողովի նախագահ փոխ-նահանգապետ Մակարօվի անունով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Պ. Տոտօմեանը ամսիս 9-ի իր 7-րդ և 8-րդ դասախօսութիւնը նուիրեց գլխաւորապէս եւրոպական զանազան երկրներում գոյութիւն ունեցող զանազան տեսակի կօօպերացիաներին, այն է՝ սպառողական, արդիւնաբերական, գիւղատնտեսական և վարկային։ Այս վերջին երկու տեսակի կօօպերացիաները շատ մեծ աջողութիւն են գտնում և հիանալի արդիւնքներ են տալիս գիւղերում, ուր նրանք ազատում են գիւղացիներին զանազան վաշխառուների ու չարչիների ճանկերից և հնարաւորութիւն են տալիս գիւղական ժողովրդին հաւաքական կերպով մշակել ու արդիւնագործել իր հում նիւթերը և այնպէս վաճառքի հանել։

Սպառողական և թէ արդիւնաբերական կօօպերացիաների աջողութեան համար անհրաժեշտ պայմանների մասին խօսելով, պ. Տոտօմեանը շեշտեց երկու գլխաւոր հանգամանքների վրա. նախ այն, որ կօօպերացիաները պէտք է ամէն կերպ խուսափեն ապառիկ առևտուրից, և երկրորդ՝ անհրաժեշտ է, որ գործը վարողները շատ հմուտ և մանաւանդ ազնիւ մարդիկ լինեն։

Ապառիկից խուսափելու և ժողովրդի ամենաաղքատ խաւերին էլ դիւրութիւններ տալու նպատակով, կօօպերացիաները Անգլիայում ամենայետ ընկած ու աղքատ թաղերում բաց են անում յատուկ խանութներ, որտեղից կարելի է ամենափոքր քանակութեամբ էլ ապրանք գնել։ Այդպիսի խանութներից, օրինակի համար, կարելի է 1—2 կոպէկի շաքար, թէյ, իւղ և այլ մթերքներ գնել։

Իսկ հմուտ գործավարներ ու լաւ գործակատարներ ունենալու համար, կօօպերացիաները յատուկ ուսումնարաններ են հիմնել, որտեղ յատկապէս կօօպերացիաներում ծառայելու համար մարդիկ են պատրաստվում։ Եւ այդ ուսումնարաններից ստացված աւարտման վկայականները սաստիկ գնահատվում են կօօպերացիաների կողմից, որովհետև այդ ուսումնարաններում աւարտողները միանգամայն զերծ են լինում արդի առևտրական հիմնարկութիւնների մէջ մեծացած ու վարժված ծառայողների այն սովորական թէօրիայից, թէ «առևտրականութիւնը խաբեբայութեան վրա պիտի լինի հիմնված, ուստի մինչև չը խաբես, չես կարողանայ ծախել»։

Այդ յատուկ ուսումնարաններում լաւ աւարտողները գործավարներ են դառնում, իսկ միջակները գործակատարներ և այլ ծառայողներ։ Դրանք լաւ էլ վարձատրվում են. 3—8 և աւելի հազար րուբլի տարեկան ռոճիկ են ստանում։

Գիւղատնտեսական ու վարկային կօօպերացիաները սաստիկ տարածված ու մեծ չափեր են ընդունում Իռլանդիայում, Իտալիայում, Դանիայում, Գերմանիայում և այլն։ Գերմանիայում, օրինակի համար, 16,000 վարկային ընկերութիւններ կան, որոնց անդամների թիւը հասնում է 1,400,000-ի։

Վարկային ընկերութիւնները կամ կօօպերացիաները երկու տեսակի են. 1) փոխատու-խնայողական ընկերութիւնները, որոնք հիմնվում են ակցիոներական հիմունքներով, ուստի և նրանց մէջ մասնակցում և լաւ օգտվում են շատ աւելի ունևոր գիւղացիները, զանազան գիւղական տղրուկներն ու վաշխառուները, իսկ 2-րդ տեսակը պարզապէս վարկային ընկերութիւն է կոչվում, ուր ակցիաներ, բաժնեգներ չը կան, այլ սկզբնական անհրաժեշտ գումարը վերցվում է պետական բանկից և, այդ պարտքը բանկին վերադարձնելուց յետոյ, վարկային սնդուկից օգտվում են բոլոր իրապէս կարիք ունեցողները։

Կօօպերատիվ ընկերութիւնների կողմնակիցները ու նրանց հիմնողները զանազան երկրներում զանազան սկզբունքներով են ղեկավարվում։ Բելգիայում և Իտալիայում, օրինակի համար, կօօպերացիաները հիմնվում են կուսակցական հողի վրա։ Այդ դէպքում սօցիալիստական կազմակերպութիւններն են հանդիսանում կօօպերացիաների տէրերն ու վարողները և կօօպերացիաներից ստացված արդիւնքի մի որոշ մասը կամ տոկոսը յատկացվում է կուսակցութեան պէտքերի համար. այդ գումարներով սօցիալիստական թերթեր են հրատարակվում, ընտրական ագիտացիա է մղվում և այլն։ Իսկ շատ տեղեր էլ, ինչպէս օրինակ Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում, կօօպերացիաները միանգամայն անկուսակցական, չէզոք բնաւորութիւն են կրում. այդտեղ կօօպերացիայի անդամ են դառնում քաղաքական ու կրօնական ամէն տեսակ ուղղութեան և դաւանութեան տէր մարդիկ։

Ռեպօրտեօր

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 8 մարտի

Գաւառի ազգաբնակութեանը սերմացու և գործածելու հացահատիկ մատակարարելու աճրդախօսութիւնը, որ սկսվել էր փետրվարի 22-ին, վերջացաւ մարտի 5-ին։ Աճրդախօսութեան ժամանակող մի պարոնից մենք ժողովեցինք հետևեալ մանրամասնութիւնը։

Նահանգական վարչութիւնը ամէն կարելի միջոցներ գործ է դրել, որքան հնարաւոր է, որպէսզի բոլոր վայրերից շատ ցանկացողներ մասնակցութիւն ունենան մատակարարութեան աճրդախօսութեանը։

Աճրդախօսութեանը մասնակցել են տեղացիներ, գաւառացիներ և Ռուսաստանից եկած առևտրականների ներկայացուցիչներ։

Սերմացու ցորենը, գարին, կորեկը պէտք է յանձնվի 25 օրվայ ընթացքում, իսկ ուտելու ցորենները մինչև ապրիլի 20-ը։

Նախ գները ընդունվում են փակ ծրարներով, վերջում սկսվում է բանաւոր աճրդախօսութիւնը։ Եւ առաջին անգամ մէկ հարիւր հազար պուդ ուտելու ցորեն յանձնելը Գանձակում, բոլոր ծախսերը ուղարկողից, քսակները վրան, մաքուր քաշով, մնում է յոյն Նէկրոպենաօյի վրա՝ 1 ր. 54 կոպ. պուդը։

Աճրդից յետոյ Ասլան Աթաբէգեանը մի կոպէկ պակասեցնելով՝ մնում է վերջինիս վրա։ Վերջնական աճուրդը յետաձգվում է մինչև մարտի 5-ը։ Այդ օրը Գանձակ է հասնում Ասխաբադի վաճառական Ռուսանօվը, հետը բերելով Անդրկասպեան երկրի սպիտակ ցորենի նմուշը գինը նշանակելով, բոլոր ծախսերը իրանից (Եւլախում կամ Գանձակում), 1 ր. 45 կոպ. պուդը։

Իսկ Աթաբէգեանն էլ Ռուսաստանի ցորեն առաջարկելով՝ գինը իջեցնում է 1 ր. 48 կ. պուդը։

Որովհետև կասկածներ են առաջ գալիս Ռուսանօվի ցորենի որակութեան վերաբերեալ, մասնաժողովը ստեան է հրաւիրել քաղաքիս հացթուխներից մի քանիսին՝ նրանց կարծիքը իմանալու, որոնք նպաստաւոր կարծիք են յայտնում Ռուսանօվի ցորենի վերաբերեալ։

Այնուամենայնիւ մասնաժողովը աւելորդ չէ համարում Ռուսանօվի ցորենից տալու 5 ֆունտ 39 մսխալ աղալու, որից ստացվում է 5 ֆ. 26 մսխալ թեփաւոր ալիւր, իսկ հաց՝ 7 ֆունտ։

Այդպիսով 150 հազար պուդ ցորենի մատակարարութիւնը մնում է Ռուսանօվի վրա 1 ր. 45 կոպէկով, 30 հազար պուդ սերմացուի աճուրդը Ասլան Աթաբէգեանի վրա՝ 1 ր. 58 կոպէկով, 4500 պուդ կորեկը Գէորգ Վարդանեանի վրա՝ 1 ր. 05 կոպ. և 16,500 պուդ գարին Մ. Յովհաննիսեանի վրա՝ 1 ր. 15 կոպ.։ Այս գներով պէտք է յանձնել Գանձակում, Եւլախում կամ Աղստաֆայում, բոլոր ծախսերը ուղարկողների վրա, մեշօկներն էլ իրանցից։

Ա. Սահակեան

Վերին-Աղդան, 5 մարտի

Մի քանի օր սրանից առաջ հողին յանձնեցինք Նատալիա Ղազ. Մխիթարեանցին, որ անասելի տանջանքներով աւանդեց հոգին ծննդաբերութեան երկունքում։ Ահա երկրորդ տարին է, որ ամուսնացել էր 13—14 տարեկան հասակում։ Ինչպէս գիւղացիք ասում են, այնքան լկլոր էր, որ կասես ծիծ ուտող երեխայ լինէր, և այսպիսին պսակում է տեղական քահանան տասնեակներով։ Իսկ յայտնի է, որ դժուար ծննդաբերութիւնները գիւղօրայքում, շնորհիւ վաղաժամ ամուսնութեան, անթիւ են։ Փետրվար ամսում պսակվեց մի տղայ, որի հասակը 1½ արշին երկայնութիւն ունի, ինքը 15 տարին նոր լրացրած, աղջիկը՝ 12—13 տարեկան...։ Հրաւիրում ենք ում անկն է ուշադրութիւնը այս տգեղ դէպքերի վրա։

Գիւղումս սով է։ Ոչ հաց կայ ուտելու, ոչ ալափ՝ անասուններին։ Մնացել ենք երկու կրակի մէջ։

Մ.

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

I

Մեծ ոգևորութեամբ բաց արինք դպրոցի դռները։

Այդ օրից անցել է մի տարի միայն, բայց արդէն հայկական չարաբաստիկ անտարբերութիւնը սկսել է սառցնել կրթական գործում արած մեր առաջին քայլերը, վտանգել վերաբացված դպրոցներից շատերի գոյութիւնը։

Դրամական տագնապի մէջ են Գէորգեան ճեմարանը, Ներսիսեան դպրոցը...

Փակվելու են դատապարտված Թիֆլիսի ծխական դպրոցներից երկուսը...

Եւ այդ բոլորը դեռևս չը բացված՝ թառամելու վրա են։

Եթէ մեր մատաղ սերնդի, մեր ապագայ յոյսերն ու ձգտումները իրագործելու կոչված, ինքնաճանաչութիւնը դարբնող այդ կրթարաններն էլ չեն կարողանում մեզ համախմբել ի մի, պառակտվող հասարակական հոսանքների և ոյժերի համար շաղկապող օղակ հանդիսանալ, մոռացնել տալ առօրեայ մանր ու գծուծ ձգտումները, հաշիւները, ապա ուրիշ ինչը պէտք է միացնէր մեզ։

Ինքնապաշտպանութեան բնազդը։ Անասուններն էլ ունեն այդ...

Մեր ճնշող իրականութեան մէջ Բագուն նոյնիսկ բացառութիւն չէ կազմում։

Վտանգված են Բագուի հայ դպրոցները։

Ներկայ ուսումնական տարվայ կիսին, առ 1-ն փետրվարի, Բագուի հայ դպրոցները պարտ են զանազան անձանց և հաստատութիւնների 15,000 րուբլի, իսկ դրամարկղում փող չը կայ ուսուցիչներին և ծառայողներին վարձատրելու համար։

Հոգաբարձութեան համար, հակառակ իր բոլոր ջանքերի, անհնարին կը լինի պահպանել այդ դպրոցները, եթէ հասարակութիւնը շարունակէ իր անփոյթ վերաբերմունքը, իր անպարտաճանաչութիւնը։

Հարկաւոր է ուսումը պարտադիր դարձնել, դպրոցը մատչելի անել բոլորի համար, —լսվում է ամէն կողմից։

Անպայման ցանկալի է։

Սակայն ո՞վ պէտք է անէ այդ բոլորը։

Ի հարկէ, այն հասարակութիւնը, որ զգում է առաջադրված պահանջների այժմէութիւնը և գնահատում նրանց կարևորութիւնը գիտակցօրէն։

Իսկ գիտակցութիւնը այնտեղ է, ուր կայ պարտաճանաչութիւն, ուր խօսքի ու գործի մէջ ներդաշնակութիւն է պահպանվում։

Մինչդեռ մենք տեսնում ենք, որ անպարտաճանաչութիւնը ամենացայտուն կերպով նկատվում է ժողովրդական այնպիսի խաւերի մէջ, որոնք ամենից աւելի պէտք է շահագրգռված լինեն վերոյիշեալ պահանջները իրականացմամբ։

Բագուի հայոց չորս դպրոցները, որտեղ ուսանում են 465 աշակերտ և 444 աշակերտուհիներ, ունեն 70,000 րուբլի ընդհանուր ծախք։ Այդ կարիքը հոգալու նպատակով 1906 թւի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ծխական ժողովի որոշմամբ ցուցակագրել են քաղաքի հայ ազգաբնակութիւնը (բացի Բալախանուց), բաժանել նրան 15 թաղերի, ընտրել ֆինանսական յանձնաժողով և սահմանել մինիմում եկամուտային տուրք։

Իրաւ է, այդ աշխատանքը նախնական մի գործ է և շտապ կատարված, ունի խոշոր պակասութիւններ, բայց այդ վիճակագրական աշխատանքը կարելի է վերստուգել իւրաքանչիւր տարի և հետզհետէ ուղղել սխալները, վերացնել պակասութիւնները։

Բայց ո՛չ, հէնց այդ հանգամանքը մատի փաթթան է դարձել շատերի համար։ Եւ այսօր այդպիսի մակերեւութաբար մտածողների հետ միասին հասարակական ցածր խաւերը, մանաւանդ աշխատաւոր մասսան, խուսափում են պարտականութիւնից յանձն առնել իրանց վրա՝ մասնակցելու այդ տուրքին։

Սակայն ինչ տրամաբանութեամբ էլ առաջնորդվելիս լինեն, այդ վերաբերմունքը նրանց անպարտաճանաչութեան ամենապերճախօս ապացոյցն է, որովհետև այդ կրթարաններում սովորողների 30%-ից աւելին բանւորների ու արհեստաւորների զաւակներ են։

Ինչ խօսք, որ դպրոցների գոյութիւնը խախտելու դէպքում ամենից աւելի տուժողը նրանք պիտի լինեն։

Իսկ հրաժարվել տուրքից՝ նշանակում է վտանգել դպրոցը, խուչընդոտ հանդիսանալ նրա դեմոկրատացման և նրա մուտքը անմատչելի պահել ժողովրդական ամենաչքաւոր խաւերի համար։

Եթէ 1907 թ. սեպտեմբերին 600 խնդրատուներից ընդունված են 170 հոգի միայն, 1908 թ. ներկայ սուղ պայմաններով այդ չորս դպրոցներում այլևս չի ընդունվի և ոչ մէկը, որովհետև ոչ տեղ կը լինի և ո՛չ էլ միջոց։

Դեռ չեմ ասում, որ դեֆիցիտի տակ կարող է խեղդամահ լինել ամբողջ դպրոցական գործը։

Աշխատակից

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Կովկասեան զինուորական - նահանգական դատարանին են յանձնված Գէորգ և Պօղոս Խանօյեանները, Նիկոլայ Բօտոմեանը և Միսակ Խաչատրեանը, որոնք մեղադրվում են Երևան քաղաքում, 1905 թ. դեկտեմբերի 22-ին Թիֆլիսի առևտրական բանկի բաժանմունքի դրամատար Կարակաշեվի վրա զինված յարձակում գործելու մէջ։ Բոլոր մեղադրվողներին սպառնում է մահվան պատիժ։

—

Մարտի 10-ին Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանում քննվեց հայկական դադարած «Շաւիղ» լրագրի խմբագիր Յովհաննիսեանի գործը, դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Պալատը Յովհաննիսեանին մեղաւոր ճանաչեց քրէական պատժագրքի 129-րդ յօդուածով և դատապարտեց 1-ամեայ բանտարկութեան՝ հաշւելով նախնական մի ամիս բանտարկութիւնը։

Նոյն օրը պէտք է քննվէր վրաց «Ցիսկարի» լրագրի խմբագիր Ալխանաշվիլու գործը, որ մեղադրվում է «Մահվանից առաջ» յօդուածը զետեղելու մէջ։ Բայց որովհետև մեղադրական ակտում բերված է յիշեալ յօդուածի մի մասը միայն, պաշտպանի միջնորդութեան համաձայն գործի քննութիւնը յետաձգվեց մինչև մարտի 24-ը, երբ դատարանին կը ներկայացվի յօդուածի լիակատար թարգմանութիւնը։

— —

Զինուորական գլխաւոր դատարանը անհետևանք թողեց մահվան դատապարտված հետևեալ հինգ անձների վճռաքննիչ բողոքագրերը. 1) գիւղացի Պայչաձէ, որ մեղադրվում էր ժանդարմական ոստիկանութեանը զինադրութիւն ցոյց տալու մէջ, 2) գիւղացիներ՝ Կաբալօվ և Տակվարէլի—ոստիկանութեանը զինված ընդդիմադրութիւն ցոյց տալու մէջ, 3) գիւղ. Լիբանիձէ,—Միխայիլ Ջափարիձէին և Պօչարաշվիլուն սպանելու մէջ։

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք 1) Նօվօրօսիյսկից Հայկանոյշ Սէչեանից՝ 5 րուբլի. 2) Վօրնէժից Խաչատուր Վարդանեանի ձեռքով հաւաքված՝ 18 ր. (նուիրել են Խ. Վարդանեան՝ 10 ր., Յ. Խուդավերդեան, Ս. Մելիք-Դաւթեան, Վ. Սիմոնեան և Մ. Մարտիրոսեան՝ 2-ական ր.), 3) Ուսուրական երկրի Նիկոլսկ քաղաքից, լուսանկար Սմբատ Բուդաղեանի ձեռքով հանգանակված՝ 45 ր. 68 կ. (նուիրատուներն են. Մ. Գլատին, Յ. Փինաչեան, Գ. Սանոսեան և Յ. Մովսէսեան՝ 5-ական րուբլի, Ս. Բուդաղեան՝ 4 ր., Գ. Սեթեան, Ս. Աղամեան, Ն. Ջէնոյեան և Լ. Սաֆարեանց՝ 3-ական ր., Ա. Յարութիւնեան և Յ. Մարտիրոսեան՝ 2-ական ր., Յ. Անդրէասեան, Գ. Զաքարեան, Յ. Թումանեան, Գ. Պետրոսեան՝ 1-ական ր., Ն. Մովսէսեան և Մ. Մելքումեան՝ 50-ական կոպէկ), 4) Թիֆլիսից Հրաչեայ Սառաֆեանից, ի յիշատակ իր կնոջ, 50 ր.։

—

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ՏԱՐԱԳԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախաբադից, պ. Յարութիւն Ն. Նարինեանից, հանգանակված Կոնստանդին Միրզօյեանցի հարսանիքի օրը, 51 ր. 30 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մինիստրների խորհրդում մօտ օրերս քննվելու է Կախէտիայի երկաթուղու հարցը։ Կովկասի Փոխարքայի միջնորդութեան համաձայն, այդ հարցը քննելու ժամանակ նիստերին մասնակցելու են Թիֆլիսի վրաց ազնւականութեան պարագլուխը և Կովկասի ներկայացուցիչ ինժեներ Վուրցել։

◆ Փետրվարի 8-ին Ջիվանշիրի գաւառի հայերի և Թուրքերի ներկայացուցիչները Գանձակի նահանգապետին ուղարկել են հետևեալ հեռագիրը. «Ջիվանշիրի գաւառի մահմեդականները և հայերը, առանց դասային և կոչումի խտրութեան, վշտով հրաժեշտ տալով և ճաշով պատւելով գաւառից հեռացող Եկատէրինօդարի 2-րդ կօզակային գնդի պարոնայք օֆիցէրներին և զինուորներին, խնդրում են առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան արկանել առ պաշտելի Միապետը տածած սիրոյ և ամենահպատակ հպատակութեան անսահման զգացմունքները։ Օգտվելով այս ընդհանուր ժողովից, գաւառի մահմեդականները, գրգռված «Новое Время»-ի յօդուածներից, որոնցով մի ազգութիւն գրգռվում է միւսի դէմ և որոնց հեղինակները միանգամայն անտեղեակ են ռուսաց պետութեանը հպատակութեան նկատմամբ, հոգու ամբողջ զօրութեամբ բողոքում են մամուլի այդօրինակ կարծիքների դէմ և բարձրաձայն, աներեսպաշտութեամբ յայտնում են. Սպիտակ Ցարի և պաշտելի Միապետի համար և ընդհանուր մեծ հայրենիք Ռուսաստանի համար պատրաստ են իրանց կեանքը և գոյքը զոհել»։ Երբ բարոն Նօլդէն ամենահպատակօրէն ներկայացրեց զեկուցում, Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց սեփական ձեռքով մակագրել. «Անկեղծ շնորհակալութիւնս արտայայտված զգացմունքների համար։ Հրատարակել ուղերձը եւ եզրակացութիւնը»։ Այդ ուղերձը կը տպագրվի «Прав. Вѣстникъ»-ում։ («Կ.»)

◆ Պետական Դումայի պատգամաւոր Կօրնիլօվը հաղորդել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան, որ համարեա ամեն տեղից Պետական Դուման բազմաթիւ նիւթ է ստանում զէմստվօ մտցնելու հարցի վերաբերութեամբ այն տեղերում, ուր նա գոյութիւն չունի։ Մինչդեռ Կովկասից այդ հարցի նկատմամբ ոչ մի նիւթ չէ ուղարկված։ Այդ իսկ պատճառով նա խնդրում է ընկերութեանը ժողովել և ուղարկել Դումային այդ հարցի վերաբերութեամբ եղած բոլոր նիւթերը, իսկ նրան լրացնելու համար, անհրաժեշտութեան դէպքում, մի յատուկ մասնաժողով ընտրել տեղում և այդ մասնաժողովի աշխատանքների հետևանքների մասին հաղորդել Դումային։

◆ Մարտի 16-ին, կովկասեան գիւղատնտեսական շինութեան մէջ (Բարեատինսկի փողոց), բացվելու է նկարիչ Ֆէթվաջեանի պատկերների ցուցահանդէսը, որը բաց կը լինի ամեն օր, ցերեկվայ ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։ Մուտքի վճարն է 30 կ., աշակերտները և զինուորները վճարում են կէսը։

◆ Մարտի 6-ին, քաղաքային շինութեան մէջ կայացաւ տնտեսական մասնաժողովի նիստը, ուր նախագահը զեկուցեց այն հետևանքները, որ ստացվեցին քաղաքում թխվող հացը անալիզի ենթարկելուց յետոյ։ Այս հետևանքներից բղխում է այն հարցը, որ անհրաժեշտ է կայարանում հսկողութիւն սահմանել Թիֆլիս ներմուծվող ալիւրի վրա։ Ժողովականների մեծամասնութիւնը, մտքերի փոխանակութիւնից յետոյ, առաջարկեց անմիջապէս շրջել քաղաքի հացատները և գործածելուց հանել անպէտք ու դառը ալիւրը։ Սակայն, վերջ ի վերջոյ, ժողովը հանգեց մի մասնաժողով ընտրելուն, որին և պաշտօն տուեց մի շաբաթվայ ընթացքում մշակել կանոններ ալիւր պահելու, տեղափոխութեան միջոցների, նրա վրա հսկելու վերաբերութեամբ։

◆ Կովկասեան օֆիցէրական ընկերութեան մէջ միտք է յղացել սառած միս բերել տալ Ալէքսանդրօպոլից և Կարսից, որով գուցէ մսի գինը Թիֆլիսում իջնի։

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան անդամ Նատրօշվը մի յայտարարութիւն է ներկայացրել ընկերութեան խորհրդին, որով մատնանշում է վերջին ժողովում տեղի ունեցած ընկերութեան քարտուղարի ընտրութեան անկանոնութիւնը։ Նատրօշվը յայտնում է, որ ընկերութիւնը պարտաւոր էր իբրև թեկնածու առաջարկել երկու հոգու, և ոչ թէ մէկին։ Այնուհետև ձայնատուութեան մասնակցել են պատւաւոր անդամները և թղթակից անդամները, որոնք իրաւունք չունէին մասնակցելու։ Այս բոլորի հիման վրա, Նատրօշվը խնդրում է ընտրութիւնները անկանոն համարել և նշանակել նորերը։

◆ «Кавк. Календарь»-ը ստատիստ. կօմիտէտի ձեռքից անցել է Փոխարքայի դիւանատան ձեռքը։ Օրացոյցը հրատարակելու գլխաւոր ղեկավարութիւնը յանձնված է փոխ-դիւանապետ Ստրատօնօվին։

◆ Մարտի 10-ին, Թիֆլիսի քաղաքային դուման կատարեց ուպրավայի վարչութեան մի անդամի ընտրութիւնը, ի տեղի իր պաշտօնի ժամանակամիջոցը լրացրած անդամ Ն. Ե. Արղութինսկու։ Թերթիկներով կանդիդատներ առաջարկվեցին պ.պ. Ն. Ե. Արղութինսկի, Յովսէփ Խոնունց և Միք. Աթաբէկեան։ Վերջին երկուսը հրաժարվեցին քուէարկվելուց և առաջինը՝ Ն. Ե. Արղութինսկին, ստանալով 43 սպիտակ և 13 սև քուէներ, վերընտրվեց ուպրավայի անդամ 4 տարվայ ժամանակամիջոցով։ Նոյն նիստում կատարվեց որբերի դատարանի նախագահի ընտրութիւնը։ Վերընտրվեց նախկին նախագահ Սուլիէվը։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է քաղաքային դումայի ձայնաւորներ՝ Մելիք-Բէգլարեանին և Մ. Սվէչնիկեանին՝ էլեկտրաքարշի և ֆունիկուլեօրի վրա հսկող գործադիր մասնաժողովի անդամներ, Ե. Թոփչեանին՝ Զուբալօվի ժողովրդական տան և գիշերային ապաստարանների կառավարիչ մասնաժողովի անդամ, Ա. Թայիրեանին և Մ. Սվէչնիկեանին՝ անտառ-այգեգործական մասնաժողովի անդամներ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է 1-ին և 3-րդ ոստիկանատան պրիստաւներին՝ խիստ հսկողութիւն սահմանել, որ Նիկիտինի ցիրկի և արտիստական ընկերութեան թատրոնի ներկայացումները աւարտվեն գիշերվայ ժամը 12-ին և որ միջարարները կարճատև լինեն։

◆ Եկատերինօդարից հեռագրում են, որ այնտեղ սպանել են Եկատէրինօդարի պրիստաւ Կուզնեցօվին, որ սկիզբներում ծառայում էր Թիֆլիսում, պահեստի ոստիկանութեան կառավարիչի պաշտօնով, և որը անցեալ տարի Թիֆլիսում ձերբակալեց Արամեանի որդու յափշտակողներին։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը 10-ական րուբլի տուգանքի է ենթարկել հացեփների սեղանի կանոնները խախտելու համար 5-րդ քաղաքամասի տանտէր Արղուտանեանին, 9-րդ քաղ. Պրիկաշչիկօվին և 10-րդ քաղ. Մօվշօվիչին։

◆ Մարտի 15-ին, երեկոյեան, Աւճալեան թատրոնում, յօգուտ ժողովրդական համալսարանի, կը ներկայացվի Իւշկեվիչի «Քաղաք» դրաման։ Մուտքը 10 և 15 կ.։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորական ատեանը մինչև մարտի 15-ը կը վերջացնէ այն երիտասարդների ցուցակների կազմելը, որոնք այս տարի կանչվելու են զինուորական ծառայութեան։ Նրանք, որոնց անունները չեն մտցված ցուցակներում, որոնք կախված կը լինեն քաղաքային վարչութեան մէջ, պարտաւոր են այդ մասին յայտնել ատեանին մինչև ապրիլի 1-ը, հակառակ դէպքում այդ անձինք կարող են զինուոր տարվել առանց վիճակահանութեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է քաղաքային վարչութեան՝ կատարել քաղաքային նախահաշւով մարտ ամսվայ համար որոշած ծախքերը, միայն մի քանիսի վերաբերութեամբ սպասել մինչև նախահաշւի հաստատվելը, իսկ որոշ դէպքերում էլ ծախքերը կրճատել։ Այդպիսով, մարտ ամսվայ ընթացքում փոխարէն ծախսելու 117,480 ր. 81 կ. մի քանի կրճատումներով ծախսվելու է 101,810 ր. 81 կ.։

◆ Թիֆլիսի դումայական ֆինանսական մասնաժողովը մարտի 9-ին արտայայտվել է այն մտքով, որ հարկաւոր չէ այժմ աւելացնել սանիտարական-բժշկական մասի ծառայողների ռոճիկները, քանի լուծված չէ սանիտարական-բժշկական մասի վերակազմութեան հարցը։

◆ Մարտի 8-ին լրացաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գանձապահ Արամեանի ծառայութեան 25-ամեակը։ Այդ օրը, քաղաքագլուխը վարչութեան անդամների և քաղաքային ծառայողների ներկայութեամբ շնորհաւորեց Արամեանին, շեշտելով իր ճառում նրա բարեխիղճ վերաբերմունքը դէպի իր պարտականութիւնները, և ցանկացաւ յօբելեարին կրկին շատ տարիներ աշխատել քաղաքի օգտին։ Նրա ընկերները վճռել են տօնել Արամեանի յօբելեանը և ընծայ մատուցել։

◆ Թիֆլիսի քաղաքային լօմբարդի ծառայողները նորից դիմել են քաղաքագլխին, խնդրելով միջնորդել դումայի առաջ աւելացնելու իրանց ռոճիկները։

◆ Մի քանի ժամանակ առաջ տեղական «Վտակ» և «Անկախ Մամուլ» թերթերում հրատարակվեց, որ շուտով Բագւում կը հրատարակվի Լէօի մի նոր եռահատոր աշխատութիւնը «Հայոց Պատմութիւն» վերնագրով։ Սակայն պ. Լէօն վերջերս յայտնեց «Վտակի» մէջ, որ, չը կարողանալով հրատարակիչ գտնել իր այդ գործի տպագրութեան համար, դժուար թէ կարողանայ հրատարակել։ Այդ առիթով Բագւից մենք ստացել ենք հետևեալ տեղեկութիւնը։ Լէօի այդ աշխատութիւնը պէտք է տպէր այն գրական մասնաժողովը, որ իր տրամադրութեան ներքոյ ունի Պօղոս Ղուկասեանի յատկացրած տարեկան 5000 րուբլի մի գումար հրատարակչական գործի համար և կոչվում է Բագւի հայոց հրատարակչական մասնաժողով։ Այդ մասնաժողովին էր ներկայացրել պ. Լէօն իր աշխատութիւնը։ Սակայն մասնաժողովը յանձնած լինելով մի քանի գրական անձանց քննելու այդ աշխատութիւնը եկել էր այն եզրակացութեան, որ Լէօի աշխատութիւնը պէտք է ենթարկվի կրճատման։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են, այդ աշխատութեան տպագրական ծախքը յանձն է առել պ. Դաւիթ Իւզբաշեանցը, յատկացնելով 2400 րուբլի։

◆ Վրիպակ։ «Մշակի» երէկվայ համարի (№ 55) ներքին լուրերի բաժնում, հանգուցեալ կաթողիկոսի՝ Գէորգ Գէորգեանի մօտ թողած գումարի առիթով «Արարատից» քաղված լուրի մէջ մի սխալ է սպրդել. կաթողիկոսի թողած գումարը ոչ թէ 100,000 ր. է, այլ 10,000 ր.։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Վօկզալնայա փողոցում № 14 տանը յանկարծակի վախճանվել է 40 տարեկան Գէօրգիյ Ջագօշվիլին։

◆ Մարտի 10-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սօլդատսկի բազարում անյայտ չարագործներ մահացու կերպով վիրաւորել են դաշոյնով փորից և կրծքից Վաս. Սիլչենկօին, որը հիւանդանոց տանելուն պէս, ուշքի չը գալով, վախճանվել է։

◆ Մարտի 10-ին, երեկոյեան ժամը 9-ի մօտերը, Պեսկօվսկայա փողոցում, Թիֆլիսի առևտրական դպրոցի մօտ, Տրդատ Գասպարեանը, ցանկանալով էլեկտրաքարշի վագոնի ընթանալու ժամանակ բարձրանալ վագոնը, ընկել է ետևից կապած փոքր վագոնի տակը և վիրաւորվել է ձախ կողքից և մի քանի ջարդուածքներ ստացել։

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

(Նամակ խմբագրութեան)

«Արարատի» մէջ պ. Խ. Ս. խօսելով իմ «Թիւրքիայի ապագան» բրօշիւրի մասին, իրաւամբ յայտնում է, որ մեր տեսակէտը այլ է բոլորովին Թիւրքահայ դատի մասին և տարբերվում է հայ յեղափոխականների «խակ ու ցնորամիտ ծրագիրներից»։

Այդ առիթով Թիֆլիսի «Վտակը» մի անսպասելի՝ նոյնքան և ծիծաղաշարժ նորութիւն է յայտարարում, որ իբր Դաշնակցութիւնը իր «մի շարք որոշումներով» նախահայր է հանդիսանում մեր տեսակէտի։

Սա արդէն զաւեշտական է։

Դաշնակց. հին վետերան շէֆերի ուշադրութիւնն ենք հրաւիրում իրանց կովկասեան թեթևամիտ ներկայացուցիչների այս ծրագրային դաւաճանութեան վրա։ Դաշնակցութիւնը, որ իր տասնեակ տարիների անցեալով ձգտել է և ձգտում է մի ամբողջական կուռ բանակի մէջ համախմբված և անքակտելի պահել «Թիւրքահայ յեղափոխականներին», լինեն վերջիններս՝ Թիւրքահայ, կովկասահայ, պարսկահայ, ամերիկահայ և այլ հատուածներից, այդ միևնոյն է,—այժմ «Վտակի» անհետեւողական ղեկավարները յայտարարում են առանց քաշվելու, որ իրանք են կանգնած են մեր այս տեսակէտի վրա—«Թիւրքահայ հարցը Թիւրքահայերի համար, առանց աչք դնելու դրսի հայերի օժանդակութեան վրա։ Թիւրքահայ գործերի ղեկավարութիւնը Թիւրքահայերի ձեռքում՝ առանց ենթարկվելու կովկասեան ռոմանտիկ յեղափոխականների դիրեկտիվների հրամաններին...» Ով գէթ հարևանցօրէն ծանօթ է Դաշնակցութեան գաղափարային և գործնական ֆիզիօնոմիային, կը տեսնէ, որ մեր տեսակէտը՝ Թիւրքահայ հարցի վերաբերմամբ, ուղղակի ժխտումն է նշանակում ֆրազեօլօգ իդէալիստների ամբողջ իդէօլօգիայի։

Բայց «Վտակի» մանկամիտ «հրապարակախօսը» յայտարարում է № 55-ի Մամուլում, որ մեր տեսակէտը «յիշեցնում է մի շարք դաշնակցական որոշումները Թիւրքահայ դատի մասին»։

Հետաքրքրական է, թէ այս նոր խաբուսիկ մանեօվրով դաշնակցական բանակի ո՞ր տարրերին են այժմ խաբել ցանկանում։ Յամենայն դէպս մի բան միայն պարզ է, որ կովկասեան ռայօնական ժողովի «ըմբոստ» եւ «անհնազանդ» ներկայացուցիչների քթի տակ հրատարակվող «Վտակի» հազարերանգ զիգզագութիւններն ու մոլորեցնող կոկետութիւնները գրօշի արժէք չունեն ուլտրա-դաշնակցական «Դրօշակի» և «Հայրենիքի» համար, որոնք շալակած իրանց ուսերի վրա կրում են մշուշամիտ կազմակերպութեան տասնամեայ տրադիցիաները։

Բ. Իշխանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալցխա, 10 փետրվարի

Խնդրեմ, երկտող նամակս զետեղելով «Մշակի» մօտակայ համարներից մէկում, հնարաւորութիւն տալ ինձ՝ ենթարկելու իմ այս բողոքը ընթերցող հասարակութեան դատաստանին։

Անհրաժեշտ եմ համարում թւել այստեղ այն դրդապատճառները, որոնք ստիպում են մի ուսուցչուհու նմանօրինակ հարցերը մանկավարժական ժողովում դնելու փոխարէն մամուլի դիմել։

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը,

1. Որ որոշ ուսուցիչների կողմից առաջարկված անհրաժեշտ հարցերը ուշադրութեան են առնվում կամ մինդարալթի անվում ոչ ըստ իրանց կարևորութեան, այլ ըստ քմահաճոյքի ժողովի նախագահի...

2. Որ նմանօրինակ բողոքները իրանց արդարացի լուծումն ստանալ չեն կարող մի մանկավարժական ժողովում՝ որտեղ հլու մատերի տարափի տակ ճնշվում է ամեն մի արդար բողոքի ձայն... և

3. Որ արձանագրվելիք փաստը Ախալցխայի հասարակութեան մէջ պատմվում է զանազան գոյներով, ուստի կարևոր եմ համարում խօսելու մամուլի էջերում։

Ահա փաստը։

Յունվարի 20-ին, շաբաթ օրը ես, իբրև տեղիս օրիորդաց դպրոցի IV-րդ դասարանի դաստիարակչուհի, երեխաների յատուկ խնդրանօք մնացի վեցերորդ ժամին նրանց ընթերցանութեամբ զբաղեցնելու համար։

Ընթերցանութեան հէնց սկզբին, ուժգնութեամբ բացվում է դասարանի դուռը և դպրոցների տեսուչ պ. Յ. Իւսուֆեանը շնչասպառ ներս վազելով յարձակվում է ինձ վրա՝ «ինչ էք անում» հարցով. «կարդում եմ»—զարմացած պատասխանում եմ ես... Սակայն պարոնը դրանով չը բաւականացաւ և փոխանակ ինձ դուրս հրաւիրելու բացատրութեան համար, կամ համբերելու՝ մանկավարժական ժողովում դնելու այդ հարցը (եթէ վեցերորդ ժամվայ ընթերցանութիւնը իմ կողմից մի դիտաւորեալ զանցառութիւն անգամ լինէր), շարունակեց աշակերտուհիների ներկայութեամբ արտայայտվել մինչև վերջը, որ ես պարտաւոր էի վարչութիւնից իրաւունք խնդրել վեցերորդ ժամին պարապելու համար*) (մինչդեռ նոյն դասարանում շաբաթական երկու անգամ վեցերորդ պաշտօնական դասեր կան...) ու չը նայելով աշակերտուհիների բացատրութեան, որ իրանք են ինձ խնդրել կարդալու և այժմ էլ ցանկանում են մնալ,—պարոնը լռեցրեց նրանց և հրամայեց ցրվել... ու ցրեց նրանց...

Դնելով հասարակութեան առաջ՝ Ախալցխայի ծխական դպրոցների պ. տեսչի մանկավարժական գործունէութիւնը լուսաբանող այս անպաճոյճ պատկերը, ես միմիայն այս հարցը կը տայի պ. Իւսուֆեանին (որ ճանաչված է իբրև փորձառու մանկավարժ...), թէ արդեօք նա կարդարացնէ՞ մի այդպիսի մանկավարժական քայլ—մտնել դասարան, աշակերտուհիների ներկայութեամբ վարկաբեկ անել դաստիարակչուհուն ու ցրել նրանց... Ուրեմն, ինչ սապարզեց է տալիս պարոնը՝ իր խնամքին յանձնված դպրոցների դաստիարակներին, քանի որ մինչև այժմ նա զանցառու է եղել և այժմ էլ հրաժարվում է մանկավարժական ժողովներում որոշելու դաստիարակների դերը, միևնոյն ժամանակ արգելելով դաստիարակներին երեխաների ցանկութեամբ որոշած ժամերին ընթերցանութեամբ պարապել նրանց հետ...

Միթէ դաստիարակի դերը կայանում է միայն թոշակներ ժողովելու, դասագրքեր և տետրակներ վաճառելու մէջ, որ պ. Իւսուֆեանը իբրև անմիջական պարտականութիւն պահանջում է դաստիարակներից...

Այն ժամանակ մի պատասխան միայն ունեմ.—Երեւելի մանկավարժութիւն...

Դաստիարկչ. օր. IV-րդ հիմ. դասարանի
Օր. Ս. Գալաչեան

—

Թիֆլիս, 2 մարտի

Զարմանքով և ապշութեամբ կարդացի «Վտակի» № 48-ի «Ժողովներ և դասախօսութիւններ» բաժնում իմ մասին գրվածը։ Տաշքենդից եկողը ես եմ և ներկայ լինելով յիշված ժողովում, ժողովի զբաղմունքի ամբողջ ժամանակամիջոցում ես արտասանել եմ միայն 2 բառ, այն է՝ առաջին որոշման մէջ գրված «ազատ խօսքի» բառերը, և յանկարծ իմ մասին գրվում է, թէ ես ասել եմ, որ ես իբր թէ փախել եմ Տաշքենդից դաշնակցականների երեսից և եկել եմ Թիֆլիս պատսպարվելու համար։

Կարևոր եմ համարում պարզել Թիւրիմացութիւնը, որ ես ո՛չ փախել եմ, ո՛չ եկել եմ «դաշնակցականների երեսից» և ոչ էլ եկել «պատսպարվելու համար». այդ տեսակ խօսքեր ես բոլորովին չեմ ասել։

Ա. Օհանջանեան

—

Թիֆլիս, 11 մարտի

Վանքի եկեղեցու քահանայի ընտրութիւնը դարձել է գորդեան հանգոյց, որ մինչև այժմ չէ լուծվում։ Ինչո՞ւ է դժուարացել. պարզ է. մէջ տեղ զանազան հաշիւներ կան, որ իրար չեն բռնում, մէջ տեղ բաւական մեծ չափով ինտրիգներ կան, որոնց թւել աւելորդ ենք համարում։

Եկեղեցուն պէտք է մի քահանայ. խնդիրը շատ պարզ է. եղած թեկնածուներից պէտք է ընտրել նրան, որը աւելի արժանաւոր է։ Այստեղ էլ պէտք է պատէ-պատ ընկնել։ Մի քանի բարեմասնութիւններ արդէն որոշ են, որ պահանջվում է քահանայացուից, այն է՝ ցենզ, կեանքի ծանօթութիւն, բարոյական որոշ հեղինակութիւն և մի քանի որոշ արտաքին բարեմասնութիւններ, պէտք է նա անպայման լինի առողջ (երկար բացատրութիւններ աւելորդ են), որեւէ կասկածելի և անկասկալի ցաւերից զերծ, ցանկալի կը լինէր պահանջել նոյնիսկ բժշկական վկայական նրա առողջութեան մասին և վերջապէս պէտք է ունենայ ձայն։

Այս գործում, ծխականներ, չը պէտք է լինել կոյր և ձեւանալ եկեղեցու սրտացաւ բարեկամներ և բարեկարգողի անունն վաստակել այդ ձևով, բայց ինչպէս կուրութեամբ լինել իրօք եկեղեցու քանդող, իսկ յետոյ քանդելուց և փչացնելուց ազատելու համար, հէնց իրանք վայ տալիս և մեծ մեծ ճռճռան ծրագիրներ և րեցեպտներ առաջարկում։

Ծխականներ, օգտվեցէք ամեն առիթից. խօսքով բան չի դառնայ, գործով ցոյց տուէք։ Օգտվեցէք դէպքից և լաւ տեղ աւելի պակաս լաւին մի ընտրէք քահանայ։ Սրա դէմ խօսողը մեղքով կոյր է։ Եթէ տեսնէք, որ ժողովուրդը աւելի լաւին թողած պակասաւորի կողմն է թեքված, իսկոյն միջամտեցէք, համոզեցէք այդ մեղք ու կրակ մարդկանց, որի բարեկամն էք ձևանում, համոզեցէք նրան ոչ թէ ձեր անձնական հեռաւոր նպատակների օգտին, այլ ընդհանուրի գործի օգտին։

Բայց այստեղ մեզ հետաքրքրում է մի հարց. ո՞րտեղ է իշխանութիւնը, ինչո՞ւ վերջ չէ տալիս այս աննպատակ ձգձգմանը. միթէ նա անտեղեակ է, թէ ինչ է կատարվում իր քթի տակ. ինչո՞ւ մի կարուկ քայլ նա չէ անում. Թող նա գոնէ արդարութիւնը երևան հանէ. նա պարտաւոր է իր ձայնը բարձրացնելու. գործը մարդկանց կրքին չը պէտք է ծառայեցնել։

---

*) Մինչև օրս կայացած մեր մանկավարժական ժողովներում այդպիսի որոշում չէ եղել։

Ծխական

—

Ալեքսանդրօպօլ, 10 մարտի

Խնդրում եմ իմ անունս էլ դնէք գրչի նահատակ Արփիարի սպանութեան դէմ բողոքող գրականագէտների շարքում։

Լ. Մանուէլեան

—

Թիֆլիս, 7 մարտի

Յունվարի 25-ին, «Աղբիւրի» 25-ամեակը լրանալու օրը, նոյն ամսաթերթի խմբագրատանը ժողովված հասարակութիւնը՝ բաղկացած գլխաւորապէս «Աղբիւր»-ի աշխատակիցներից, ինչպէս նաև պատւաւոր հիւրերը յանձնարարեցին բժշկ. Բ. Նաւասարդեանին հրաւիրել յատկապէս մի ժողով խորհրդակցելու համար, թէ ինչպէս տօնել «Աղբիւրի» 25-ամեայ յօբելեանը։

Բ. Նաւասարդեանը կատարեց իր վրա դրված պարտաւորութիւնը, հրաւիրելով առաջին մասնաւոր հիւանդանոցում մի բազմամարդ ժողով, որին և նախագահում էր ինքը, իսկ քարտուղարն էր բժիշկ Ա. Շխեան։

Ժողովը վճռեց՝

1) Աչքի առաջ ունենալով «Աղբիւրի» կատարած օգտաւէտ և բեղմնաւոր դերը հայ մանուկների դաստիարակութեան ասպարիզում 25 երկար տարիների ընթացքում,—տօնել արժանավայել կերպով «Աղբիւրի» յօբելեանը, որի համար և ընտրել մի յանձնաժողով։

2) Քանի որ այսօր հայ գրական հրապարակի վրա դրված է արդէն Լէօի՝ այդ բազմաշխատ և արգասաւոր հեղինակի յօբելեանը, յանձնաժողովը կը սկսի իր գործունէութիւնը Լէօի յօբելեանից յետոյ, այն է՝ սոյն թւի մայիսի 4-ից յետոյ։

3) «Աղբիւրի» յօբելեանը տօնել սոյն թւի աշնանը, իսկ թէ որ ամսի որ օրը—թողնել յանձնաժողովի հայեցողութեանը։

4) Յանձնաժողովը գլխաւորապէս պիտի ջանայ ույժ տալ յօբելեանի նիւթական կողմին, քան հանդիսական, որպէսզի կարելի լինի պատշաճաւոր կերպով ապահովել «Աղբիւրի» մշտական գոյութիւնը։

Ժողովը միաձայն ընտրեց յօբելեանական յանձնաժողովի համար հետևեալ անձերին. իշխանուհի Սօֆիա Արղութեան-Երկայնաբազուկ, տ. տ. Հեղինէ Առստամեան և Յուլիանէ Սպենդիարեան, պ. պ. Գ. Բարխուդարեան, Գ. Բաշինջաղեան, Ա. Մելիք-Ազարեան, Ի. Յարութիւնեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, Նար-Դոս, բժիշկ Ա. Շխեան, Յ. Սպենդիարեան, Ն. Սօլօվեան և Ա. Քալանթար։

Յանձնաժողովն իրաւասութիւն ունի զօրացնելու իր կազմը, ըստ իր հայեցողութեան և այլ անձերով, երբ այդ հարկ համարէ։

Փետրվարի 29-ին յանձնաժողովն ունեցաւ իր առաջին նիստը և, նախագահ ընտրելով բժշկ. Բ. Նաւասարդեանին, իսկ քարտուղարներ՝ Նար-Դոսին և բժ. Ա. Շխեանին, զբաղվեց իր առաջիկայ գործունէութեան ծրագրով։

Նախագահ՝ բժշկապետ Բ. Նաւասարդեան
Քարտուղարներ՝ բժ. Ա. Շխեան, Նար-Դոս

—

Կաղզուան, 1 մարտի

«Զինգեր» ընկերութեան գործակալի պաշտօն վարելով տեղումս ամբողջ չորս տարի ամենայն հաւատարմութեամբ՝ անցեալ թւի մայիս ամսին Կարսի կառավարիչ պ. Յ. Գալստեանից երեք ամսվայ արձակուրդ խնդրեցի հանքային ջրեր գնալու, հիւանդութեանս պատճառով, և ստացայ 50 ր. իբրև նպաստ, 25 ր. ււանս և 3 ամսի համար ռոճիկ ընտանիքիս։ Պ. Գալստեանը իմ պաշտօնը ժամանակաւորապէս յանձնեց իր քենեկալ պ. Ա. Եղիազարեանցին և իմ հարցին՝ մի քանի մարդկանց ներկայութեամբ*) շեշտեց, որ ժամանակաւորապէս է նրան տալիս իմ պաշտօնը՝ մինչև իմ վերադարձը։ Սակայն երբ ժամանակին վերադարձայ հանքային ջրերից և ներկայացայ պ. Գալստեանին՝ պաշտօնս կրկին ստանձնելու, նա սառն կերպով պատասխանեց. «Դուք ձեր պաշտօնից վեց ամիս առաջ հեռացված էք հիւանդութեան պատճառով»։ Այնուհետև իմ բոլոր թախանձանքներն անլսելի մնացին պ. Գալստեանի կողմից, և ես, հիւանդ դրութեան մէջ, զրկվեցի 5 անդամից բաղկացած ընտանիքիս ապրուստի միակ միջոցից։ Իմ դրութիւնն այնպէս էր, որ երբէք չէի կարող լռել, ուստի՝ պ. Գալստեանից յուսահատված՝ դիմեցի Թիֆլիս և Պետերբուրգ, մեծ յոյս ունենալով, որ «Զինգերի» նման մի հսկայ ընկերութիւն չի զլանայ առնել իմ արդար բողոքը և իմ օրինական պահանջներին բաւարարութիւն կը տայ։ Սակայն ոչ մի խօսք—պատասխան չը ստացայ։ Միայն պ. Գալստեանը, չը գիտեմ ինչից դրդված, ինձ ուղարկում է մի թուղթ և 31 ր. նուէր, որպէս մի ստորագրութիւն տամ, թէ ընկերութիւնից լիովին բաւարարութիւն եմ ստացել և էլ ոչ մի բողոք չունեմ։ Ես, ի հարկէ, մերժեցի։ Դրանից յետոյ պ. Գալստեանը ինձ առաջարկում է պաշտօն ստանձնել Կարսի վիճակի մի խուլ ու անյայտ անկիւնում, մի այնպիսի րայօնում, որը, դեռ չը հաշւելով նիւթականի կողմից շատ աննպաստ լինելը, իր սաստիկ ցուրտ կլիմայով միանգամայն վտանգաւոր է իմ հիւանդ օրգանիզմին։ Այն ինչ ըստ պ. Գալստեանի «ես վեց ամիս առաջ պաշտօնից հեռացված եմ հիւանդութեանս պատճառով»։

Նիւթապէս, ֆիզիքապէս զրկված ու տուժած աշխատաւորս իմ գլխին եկածը ճշմարտութեամբ հրապարակ հանելով՝ նախ «Զինգեր» ընկերութեան գործի մէջ եղողների և ապա ընթերցող հասարակութեան դատաստանին եմ յանձնում իմ դատը։

Պետրոս Մանուկեանց

ԻՆՁ ՍԵՐՄԱՆԵԼ ԵՆ, ԱՅՆ ԵՒ ՀԸՆՁՈՒՄ ԵՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Բագու, 28 փետրվարի

Փետրվարի 22-ի գիշերը, հարսանեաց զուռնա-զուռնալի ձայների ներդաշնակութեան հետ միախառնվեցին նաև «դաստիարակողների» և «դաստիարակվողների» մաուզերների ներդաշնակ ձայները։ Իրար դէմ կանգնած էին՝ մի կողմից ցինիկ կարգերի և մեծ ոճրագործ ինքնակալների դէմ մղված ահեղ կռիւներում պաշտված ու սիրված «ընկերներից» մէկը, իսկ միւս կողմից «սար և մութ ուժերից» կազմված խմբակը, որոնք միշտ թալաններով են զբաղված և որոնց համար մարդասպանութիւնը մի սովոր արհեստ է։

Ինչ ասել կուզէ, որ այդ տեսակ ներդաշնակ ձայների տակ պարը շատ «հրաշալի» կը լինէր և եղաւ էլ։ Ընկան անշնչացած երկուսը, իսկ վիրաւորվածների մէջ, ասում են, որ կան կանայք և երեխաներ։

Քիւրդ Խէչօյի գնդակը, ինչպէս «Տաճկաստանի արնոտ լեռների վրա», այստեղ ևս իր ույժը ցոյց տուեց և գետին գլորեց «հայ բուրժուազիայի պաշտպան» Սերեօժային։ Սերեօժայի ընկեր Գասպարի գնդակը վերջ տուեց քիւրդ Խէչօյին։

Փետրվարի 24-ի գիշերը սպանվեց Հայկ Գործակալեանը։

Այս բոլորից յետոյ հարց է ծագում, թէ ովքեր են այս երկու հակառակորդ բանակները, որոնք այսպէս անխնայ կոտորում են միմեանց, և որտեղից են նրանք ծնունդ առել։

Դաշնակցութիւնը ինչպէս ազգայնական մի կուսակցութիւն, որ միշտ ջանացել է իր ձեռքին պահել ամբողջ հայութիւնը առանց դասակարգի խտրութեան, այլևս չէր կարող իր գոյութիւնը պահպանել։ Իսկ միւս կողմից եթէ նա կանգնէր դասակարգային հողի վրա, մնաս բարեաւ պիտի ասէր ազգի մի մասին, որը այնքան էլ հաճելի չէր նրան։ Հայ բուրժուաների սալօններից սնունդ առնող և միևնոյն ժամանակ կապոյտ շապիկով ման եկող լիդերները դրա ելքն էլ գտան ու լարեցին կօմպրօմիսային մեքենաները։ Այնտեղ, որտեղ հարկաւոր էր ազգ պաշտպանել, կոչ էր անում դէպի Հայաստան։ Որտեղ հարկաւոր էր աշխատաւորի շահերը պաշտպանել, այնտեղ հայհոյում էր կեղեքող հայ բուրժուազիային և միևնոյն ժամանակ պահպանում էր նոյն բուրժուազիայի կայքերը իր զինուորներով՝ «ազգի դաւաճան» սօցիալիստների յարձակումներից։ Հայ բուրժուազիայի խոշոր ամանները լիզելուց յետոյ՝ գնալ բանւորի կապոյտ շապիկով շրթունքներ սրբելը արհեստ դարձաւ Դաշնակցութեան ինտելիգենցիայի համար, որ շատ աջողութեամբ կատարում էր։ Բայց Բագւում այդ բանը անելը նրանց ախաշկարա չէր աջողվում։ Վերջին ռէակցիայի և արդիւնաբերութեան կրիզիսի շնորհիւ, Բագուն ևս, ինչպէս նաև Ռուսաստանի շատ քաղաքներ, դարձաւ աւազակութեան և անարխիական գործունէութեան վայր։ Դաշնակցութիւնը, որ սկսել էր սօցիալիզմի փետուրներով զարդարվել, մի քանի անգամ փորձեց այստեղ ևս երկու ձմերուկը մի ձեռքով բռնել։ Մի կողմից նա իր զինուորների միջոցով պաշտպանում էր մասնաւոր սեփականութիւնը, (հայ բուրժուազիայի սնդուկները), իսկ միւս կողմից իր իդէալիստ քարոզիչների միջոցով տարածում էր «իր սօցիալիզմը»։

Շատ շուտ համոզվելով, որ այդ խաղը այստեղ չէ անցնում և որ հայ պրօլետարիատի գիտակից մասը չէ խաբվում իր գոյնզգոյն փետուրներից, դիմեց մի ուրիշ միջոցի։ Եւ ահա հէնց այդ միջոցին կազմակերպվում է մի խմբակ «ոչ պաշտօնապէս», այլ այնպէս, ի միջի այլոց... Այդ խմբակը մկրտվում է «կանաչ հարիւրեակ» անունով։ «Կանաչ հարիւրեակի» նպատակն է կռւել անարխիստների և շանտաժիստների դէմ։ Այդ խմբակի մէջ մտնում են Դաշնակցութեան «կռւող տղաները»։ Խումբը սկսում է իր գործունէութիւնը, հայ բուրժուազիան ազատ շունչ է քաշում, և այդ բոլորը կատարվում է Դաշնակցութեան քթի տակ և նա չը տեսնել է ձևացնում։ Բուրժուազիայի առաջ նրանք մեծ պարծենկոտութեամբ գովում են, իսկ հայ բանւորի առաջ պախարակում են այդ կռւողներին... Եւ այդ՝ մինչև որ...

Մինչև որ նա համոզվեց, որ իր ծոցում տաքցրած օձը իրան է ուզում խայթել։ Բնական է, որ այդ դէպքում մնում էր միայն օձին խեղդել։ Օձը այնքան էր մեծացել, որ նրան խեղդելը այնքան էլ հեշտ չէր։ Եւ ահա այսօր, հին, իրարից սիրված ընկերները իրանց «արլաների» դաստիարակման, վատ տակտիկայի պատճառով, կոտորում են իրար ամեն քայլափոխում։ Մութ փողոցներից անցան հարսանեաց հանդէսներ և Ալլահը գիտէ թէ մինչև ուր կարող են հասնել։

Այս բոլորից յետոյ տեսնենք թէ ինչ է անում Դաշնակցութիւնը։ Թռուցիկների միջոցով նա աշխատում է գրգռել Խէչօյի ընկերներին՝ «քո միացող վէրքերը հանգիստ չեն տայ ընկերներիդ, մինչև չը սանձահարվեն խուլիգանական այդ խմբակների ոտնձգութիւնները»—գրում է նա թռուցիկում. միւս կողմից ազդ է բաց թողնում, իբր թէ ջանում է իրանց շնորհիւ գրգռված կրքերը հանդարտեցնելու համար, և խոստումներ է անում արժանի պատիժ տալ մեղաւորներին։

Բաւական է որքան թունաւորվեց այդպիսի անտակտ գործունէութեամբ հասարակական կեանքը. բաւական է որքան թռուցիկներով և ազդերով զինեցին իրանց նոր ընկերներին — երէկվայ նոյնպէս ընկերների դէմ։

Դէմօս

ՄԱՄՈՒԼ

Արփիարի սպանութիւնը սկսել է խորհրդածութեան առարկայ դառնալ և եւրոպական մամուլի մէջ։ Միլանի «Il Secolo» յայտնի թերթի մարտի 9-ի համարում մի բաւական մեծ յօդուած է տպված այդ սպանութեան առիթով, Արփիարի կենսագրութեան հետ միասին, որտեղ յօդուածագիրը նրան համեմատում է իր քննադատական կորովի մտքի համար Րընանի և Զօլայի, ինչպէս և Անատօլ Ֆրանսի հետ։

—

«Нов. Вр.» թերթը մի սաստիկ արշաւանք է սկսել Կովկասի Փոխարքայի դէմ, Մենշիկօվի բերանով։ Վերջին համարներից մէկում (№ մարտի 4-ի) նա աշխատում է ստուեր ձգել և մեր երկրի թուրք ազգաբնակութեան վրա, հաւատացնելով, որ իբր թէ Բագւում, տեղական մուսուլմանների մէջ, սաստիկ պատրաստութիւններ են տեսնվում։ Թուրքերը անհամբերութեամբ սպասում են պատերազմի սկզբին Թիւրքիայի հետ։ Նրանք բոլորովին յայտնապէս արտայայտում են, որ պէտք է օգնեն սուլթանին, որովհետև մարգարէի դրօշակը փադիշահն է պահում։ Յաճախ նրանք ժողովներ են կազմում, բայց վճիռները գաղտնի են պահում։ Վճիռներից մինը այս բովանդակութեամբ է. «Բագու քաղաքի և շրջակաների մուսուլմանները, Ռուսաստանի պատերազմի դէպքում Թիւրքիայի հետ, պէտք է օգնեն վերջինին. 1) Նրանք պէտք է հրդեհեն նաւթային բոլոր պրօմիսլաները և ոչնչացնեն նաւթարդիւնաբերութիւնը, որպէս զի զրկեն երկաթուղիները և շոգենաւերը վառելիքից և այդպիսով խանգարեն զօրքերի կանոնաւոր շարժումները. 2) Նրանք պէտք է ջարդով դուրս քշեն բոլոր քրիստոնեաներին Բագուից, բացի հրէաներից (որոնց թիւը շատ է Բագւում և որոնք խոստանում են օգնել թիւրքերին)։ Այս վճիռը կայացնողները երդուել են Ալլահին որ կը կատարեն»։

Թուրքերից յետոյ հերթը հասնում է հայերին։ Սրանք, որպէս թէ, Փոխարքայի պալատում ականաւոր անձինք ունեն, որոնք և սաստիկ ազդեցութիւն ունեն նրա վրա։

Գոնէ Մենշիկօվը նեղութիւն կրէր ստուգելու «Кавк. календарь»-ից, թէ քանի հատ հայ պաշտօնեաներ կան պալատում։ Երկար կանգ առնել ափեղցփեղ յօդուածների վրա չարժէ, և ամենալաւ պատասխանը՝ արհամարհանքն է։ Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվը մեղադրվում է այն բանի մէջ, որ չը հետևեց տխրահռչակ Գօլիցինի ռուսացման քաղաքականութեան, բայց ռուս պատրիօտները չեն մտածում թէ ինչ հետևանք կունենար այդ քաղաքականութեան շարունակութիւնը։

—

«Վտակ» թերթը, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ մենք «Մշակի» № 53-ի մէջ բառ առ բառ չէինք բերել իր № 46-ի մէջ տպված թղթակցութիւնը Կ. Պօլսից կաթողիկոսական հարցի մասին, ուր խօսվում է կաթողիկոսական ընտրութեան կարևորութեան մասին, պատասխանում է իր № 54-ի մէջ, թէ նա խօսել է միայն Օրմանեանի դէմ։ Շատ լաւ. թող ինքն ընթերցողը դատէ, թէ ինչ են նշանակում այս խօսքերը՝ տպված «Վտակի» մէջ (№ 46).

Քաղաքական արդի դժնդակ ոյժերին տակ, երբ սարսափահար ժողովուրդը հնար չունի օրինաւորապէս շահագրգռւել իր ճակատագիրը տնօրինող կենսական հարցերով—բնական է, որ կաթողիկոսական ընտրութեան խնդիրը տարապայման հետաքրքրութիւն մը արթնցնէ այստեղի շրջանակներուն մէջ։

Եկեղեցական խնդիրները չեն, որ պահ մը իսկ պիտի կրնային մեր հասարակութեան ուշը սևեռել կաթողիկոսական գահուն վրայ. բնաւ երբէք։ Ինչ որ յատկապէս սերտիւ կը կապէ մեզ Էջմիածնի գահուն հետ, քաղաքական այն կապերն են, որ այդ աթոռը, աւելի կամ նուազ չափով, նայելով իր գահակալներու ըմբռնումներուն կամ խառնւածքին, պահպանած է ռուսահայ քաղաքական կացութեան հետ։ Հոս մոռցուած չեն տակաւին Գէորգ Դ-ի այնքան թաքուն մնացած յարաբերութիւնները Պօլսի ռուսական դեսպան Իգնատիևի հետ, վերջին ռուսաթիւրք պատերազմէն առաջ։ Մոռցուած չեն Մակարի «շողոքորթութիւնները յոյս դահոյից օգոստափառ սուլթանին», և մասնաւոր յարգանքով մը կը խօսի բերնէ-բերան Խրիմեանի կատարած բոլոր ջանքերը հայկական խնդիրը վերստին արծարծելու Լահէի խորհրդաժողովի առաջ, և անոր վերջին գրութիւնները Անգլիոյ թագաւորին և Ռուսիոյ կայսեր, անգլօ-ռուս համաձայնութեան նախօրեակին։

Առանց պատմական հիմքեր փնտռելու իրենց հաւատքին, հոս այն համոզումը կայ, որ կորովի և մտացի կաթողիկոս մը պատմական վայրկեանի մը մէջ կրնայ մեծ գործ մը կատարել, ներկայանալով իբր պաշտօնական արտայայտիչը հայութեան իղձերուն և հրամայողական պահանջներուն։

Ահա թէ ինչու է, որ կաթողիկոսական խնդիրը մեր այժմէական հարցերէն մէկն է։

Միթէ այս տողերից պարզ չէ, որ դուք կաթողիկոսական հարցին ահագին կարևորութիւն էք տալիս։ Մենք սրանով ամենևին չենք ուզում ասել, որ ձեր կարևորութիւն տալը որևէ նշանակութիւն ունի. ոչ. այլ միայն ցոյց տալ հայ հասարակութեան, թէ դուք ինչ երկդիմի և անարժան դեր էք կատարում շարունակ. մի կողմից խօսում էք կաթողիկոսական գահի կարևորութեան մասին, միւս կողմից՝ քարոզում էք, թէ կաթողիկոսական հարցը զրօյի նշանակութիւն չունի։ Վերջապէս երբ պէտք է մի կորրեկտ, յայտնի և համարձակ վերաբերմունք ցոյց տաք և չը դիմէք կեղծ ու պատիր միջոցների. երբ պէտք է ցոյց տաք ձեր ուղղութիւնը...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԴՄՈՆԴԷ ԴԷ ԱՄԻՉԻՍ

—

Փետրվարի 27-ին վախճանվեց իտալական յայտնի գրող դէ Ամիչիս։

Էդմօնդէ դէ Ամիչիսը ծնվել է 1846 թւին. մտաւ զինուորական ծառայութիւն, մասնակցեց Կուստօցցում եղած ճակատամարտին 1865 թւին, և ապա նա Ֆլօրէնցիայում խմբագրում էր «L'Italia Militare» լրագիրը։ Նա շատ է ճանապարհորդել, պտտեց ամբողջ Եւրօպան, Հիւսիսային Աֆրիկան և Հարաւային Ամերիկան ու ամեն տեղից նիւթեր էր ժողովում իր գրուածքների համար։

Նրա հեղինակութիւններից ամենանշանաւորներն են «Երկու բարեկամ» և «Կառք բոլորի համար»։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թաւրիզ, 29 փետրվարի

Փետրվար ամսում կայացաւ «Աղքատախնամ ընկերութեան» եռամսեայ գործունէութեան հաշւետուութիւնը։ Վարչութեան առաջարկութեամբ ընդհանուր ժողովը ընկերութեան պատւաւոր անդամ ընտրեց դոք. պ. Ասլանեանին և պ. Զ. Նազարբէկեանին։ Խօսվեց ընկերութեան գործունէութեան ընդլայնման մասին և ընտրվեց նոր վարչութիւն։ Յուսանք, որ նոր վարչութեան շնորհիւ ընկերութիւնը բարգաւաճի, որի գոյութիւնը ներկայ անմխիթար հանգամանքներում մի անհրաժեշտութիւն է Թաւրիզեցիների համար։ Պարսկահայ հարուստները թող չը մոռանան իրանց հայրենիքը, որը ներկայումս տնտեսական քայքայման յուսահատ վիճակումն է գտնվում։ Գործ չը կայ, առևտուր չը կայ, փող չը կայ... ահա ամենօրեայ մեր հաւատամքը։ Այսպիսի դրութեան մէջ հիւծվող մի հասարակութիւն ինչ օգնութիւն կարող է անել իրանից աւելի թշուառներին, աղքատներին...

II

Պարսկաստանում տիրապետող ուրոյն հանգամանքները և տնտեսական անձուկ վիճակը հայ հասարակութեան $^2/_3$ մասին ստիպել են օղեվաճառութեամբ զբաղվելու։ Հայ մագազինները համարեա բոլորը անխտիր խմիչքի առևտրով են զբաղվում։ Արհեստաւորների մեծ մասը նոյնպէս։ Ամենախայտառակ ձևի օղեվաճառութիւնը—մէյխանաջինութիւնը կատարվում է անխտիր, ուր շատ անգամ կանայք են թուրք սրիկաներին օղի «թավազա» անում։ Պատկերի այլանդակութիւնը, անբարոյականութիւնը ակներև է։ Ասել թէ մոլութիւն է պարսկահայերի համար «մէյխանաջիութիւնը», այդ յանցանք է. ոչ մի երկրում այդ առևտուրը այնքան անպատւաբեր չէ համարվում, որքան Պարսկաստանում. բացառութիւնները մի կողմ դնելով, մենք համարձակ կարող ենք ասել, որ անճարութիւնն է ստիպում հայ մարդուն այդ ստոր առևտրին մօտենալ։ Անճարութեան գլխաւոր շարժառիթի մասին անցեալ տարվայ «Մշակում» զետեղած յօդուածներով խօսել և մանրացոյց եմ արել, որ Պարսկաստանում քրիստոնեաները ընդհանրապէս զրկված են որոշ առևտրական իրաւունքներից և գլխաւորապէս այդ է պատճառը, որ խմիչքի գործը որպէս մենավաճառ մնացել է հայերի ձեռքում։

Մի կողմից անճարութիւն, միւս կողմից խայտառակութիւն և անբարոյականութիւն. ահա մի երկսայրի սուր, որը ցցվել է մեր առաջ և որից խուսափելու հնար պիտի մըտածել։ Ահա մի խնդիր, որը մօտ երկու ամիս է դրված է թեմական պատգամաւորական ժողովի սեղանի վրա և որի առիթով երկար խորհրդածութիւններ են տեղի ունենում։ Այս խնդրի բարեյաջող լուծումից կախումն ունի հասարակութեան բարոյական մակարդակի բարձրացումը, որի առիթով մեծ ջանքեր է գործ դնում հայր թեմակալը։

III

Լէօի յօբելեանին Թաւրիզեցիք էլ ուզում են մասնակցութիւն ունեցած լինել. արժէր, որ հայութեան պարսկահայ հատուածն էլ մաս ունենար այն մարդու յարգանաց հանդէսում, որը անխտիր պատկանում է ամբողջ հայութեան, հանրութեան, որի գրուածքները կարդացել են ամենքը։ Անքուն գիշերների, հիւանդ աչքերի, տանջալից կեանքի տիրտուր՝ ազգը ուզում է երախտահատոյց լինել իր մշակին։ Այսպիսով գուցէ հետզհետէ մոռացվի «գնա մեռիր, արի սիրեմ» ասացուածքը։

Ի դէպ պիտի ասեմ, որ Թաւրիզեցիք մեռնելուց յետոյ էլ «չը սիրեցին» ոչ Շահազիզին և ոչ էլ նահատակ Արփիարին։ Երևի մեր ինտելիգենցիան կարծում էր, որ պակաս կրթիչ նշանակութիւն կունենային հասարակութեան համար այդ մարդկանց յիշատակին նուիրված սգահանդէսները։ Ազգերի պատմութիւնը մեծ մարդկանց պատմութիւնն է միայն. իսկ մեր ազգի մէջ փոքր մարդիկ չէին Շահազիզ և Արփիար...

IV

Հայր թեմակալի նախաձեռնութեամբ ցանկութիւն կայ մի շաբաթաթերթ հրատարակելու։ Նախամտածված է կազմել հրատարակչական մարմին որոշ բաժնեվճարներով, որի վրա պիտի ծանրանայ թերթի ծախքը և ապա պիտի ընտրվի մի խմբագրական մարմին լրագրական մասի համար։ Մեր կարծիքով՝ առայժմ նպատակայարմար կը լինէր, եթէ առաջնորդարանը իր թեմական օրգանը ունենար, որը որպէս փորձ շարունակելով կարելի կը լինէր ապագայում ուրիշ կերպարանք տալ։ Փոքրից սկսելը աւելի աջողութիւն կարող է ունենալ։ Մեծ ծրագիրները շատ անգամ հէնց լոկ ծրագիրներ են մնում։ Քանի որ արագատիպը կայ և յանձին հայր թեմակալի ունենք տպագրական և լրագրական գործին մի բաւականին հմուտ անձնաւորութիւն, լաւ կը լինէր, որ թեմական խորհուրդը աշխատէր իր թեմական օրգանը ունենալ. այլապէս մենք յոռետես ենք աջողութեան, որովհետև անդամավճարներով կազմված հրատարակչական գործը նմանաւանդ Թաւրիզում դժուար թէ կարողանայ առանց դժուարութիւնների և դժգոհութիւնների քայլափոխել։ 5 թուման անդամավճար տուողներս վախենում եմ 50-ների պահանջ դնենք։

V

Հասարակական հաստատութիւններ մեզանում շուտ և շատ ծնվում և այդպէս էլ կամ մեռնում կամ անգործութեան են դատապարտվում։ Բազմաթիւ օրինակներից մէկը միայն. Թաւրիզի 800 տուն հասարակութիւնը երեք գրադարան-ընթերցարան ունի. բայց երեքը՝ մէկ չարժեն։ Ինչ մոլութիւն է մեզանում չը գիտեմ. ամեն ինչ երկու-երկու։ Մի ժամանակ ունէինք երկու թատերասիրաց ընկերութիւններ, երկու հայուհեաց, ունէինք երկու թատերասրահներ, երկու նման դպրոցներ։ Որքան ցանկալի է մէկը ունենալ, քիչ ունենալ, բայց լաւն ունենալ, որ նպատակի ծառայէ։

Իբօ

ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Ժամանակագրական կարգով)

—

Յունվարի 18-ին։ Ֆէրիկը իմանալով, որ քիւրդ ցեղերը՝ Մանգուռ, Մամաշ, Փիրան և Գէուրք՝ իրանց ձիաւորներով նեղութիւններ են պատճառում քաղաքի բնակիչներին, հրամայեց ցեղապետներին արձակել իրանց ձիաւորներին, որ գնան իրանց տներում սպասեն և երբ պէտք կը լինի կը կանչվեն։ Ձիաւորները, մեկնելուց առաջ, ահագին քանակութեամբ կողոպտումն կատարեցին, տանելով իրանց հետ ինչ որ կարողացան ձեռք բերել, լաց ու կոծի մէջ թողնելով կողոպտված բնակիչներին։

Յունվարի 19-ին։ Սօվուջ-Բուլաղի սառաֆներն և այլ խանութպանները, տեսնելով որ իրանք ահագին վնասներ են կրում այն հանգամանքից, որ թիւրք զինուորականները և պաշտօնեաները թիւրքաց լիրան, որ առաջ արժէր 44 ղռան, ստիպում են վերցնել 54 ղռանով,—հաւաքվում են և վաճառականների հետ մեծ ժողով գումարելով օսմանեան փոխ-հիւպատոս կամ շահբենդէր հաջի Շէրիֆի մօտ՝ քննում են այդ հարցը և առաջարկում վերացնել այդ բռնութիւնը, որի հետևանքը, շարունակվելու դէպքում, պէտք է լինի մեծ սնանկութիւն առևտրականների մէջ։ Օսմանեան պաշտօնեաները պնդում են, որ պէտք է թողնել 54 ղռան արժէքը, իսկ վաճառականները, ապացուցանելով որ 3 տարի առաջ լիրայի արժէքը 38 ղռան է եղել, իսկ 7 տարի առաջ նոյնիսկ 32 ղռան, և այժմեան բարձրացումը արհեստական է, պնդում են որ թողնվի վերջին կուրսի արժէքը, այն է 44 ղռան։ Ի վերջոյ ժողովը որոշում է լիրայի արժէքը սահմանել 46 ղռան։

Յունվարի 20-ին։ Ֆէրիկ Մէհմէդ Ֆազըլ փաշայի և օսմանեան զօրքի յաղթական մուտքը՝ Սօվուջ-Բուլաղ այսպէս է նկարագրվում մի նամակի մէջ, որ այս րօպէիս ստացվեց։

Պարսից հրամանատար Ֆարմանը, տեսնելով որ անզօր է դիմադրել օսմանցոց զօրքին, որ Թէհրանից խոստացված օգնութիւնը չը հասաւ, ոչ օժանդակ զօրք եկաւ, ոչ ուտեստ և մթերք, որ տեղական ազգաբնակութիւնը, իբրև սիւննի, արդէն ապստամբել և միացել է թիւրքաց հետ, բարւոք համարեց իր բանակով նահանջել յունվարի 13-ին Սօվուջ-Բուլաղից, քանի որ օսմանեան զօրքը արդէն մօտեցել էր այդ քաղաքին։ Եւ նահանջեց։ Եւ օսմանեան զօրքը Ֆէրիկի հրամանատարութեամբ յունվարի 15-ին երևաց։ Վաղ առաւօտեան, արևը չը ծագած, քաղաքի բոլոր բնակիչները ընդ առաջ գնացին քաղաքից դուրս. ժամը 11-ին առաւօտեան տեղի ունեցաւ մուտքը քաղաք, հետևեալ թափօրով։ Ամենից առաջ գալիս էին չավուռներբ գրօշակներով. Նրանց ետևից դերվիշների խումբը, երգելով, փառաբանում էր սուլթանին. ապա նժոյգի վրա՝ հրամանատար Մէհմէդ-Ֆազըլ-Ֆէրիկ փաշան, շրջապատուած Թիւրք պաշտօնեաներով, 50 ղաթր-սուվարներով (կօզակ) և քիւրդ ցեղապետներով ու աղաներով. Նրա ետևից գալիս էին աշայիր ձիաւորները, իւրաքանչիւր ցեղինը առանձին, ամեն մի խմբի առաջ երկու չավուշ և դօհուլ-զուռնա, նուագածութեամբ: Ապա բերում էին 6 հատ նոր սիստեմի թնդանօթներ, 60 բեռն ռազմամթերք, իսկ դրանց հետևում էին 6 Թաբուր (գունդ) ասկեար (զօրք), որից 3 Թաբուրն Անատօլի կոչված և 3 Թաբուրն արաբ. ամեն մի Թաբուր բաղկացած էր 200 զինուորից. բոլոր զինուորների հրացանները մաուզերեան տասնհարուածեան սիստեմի էին: Անատօլ կոչված զօրքը նմանում է ռուսաց զինուորին, բայց զգեստները հին էին: Իւրաքանչիւր Թաբուրն ունի իր բժիշկը. վեց բժիշկներից 2-ը հայ, 2-ը յոյն և 2-ը Թիւրք: Հայ բժիշկներից դօքտոր Հայկը պօլսեցի է, իսկ դօքտոր Ռուբէնը՝ կեսարացի: Ինչպէս ասում են, զօրքի իսկական հրամանատարը եւրօպացի է (գերմանացի), բինբաշու տիտղոսով: Զօրքը բնակեցրին քաղաքի բնակիչների տներում: Ուտեստը թէև դրամով են գնում, բայց իրանց լիրան, որ արժէ 44 ղրան, ստիպում են վերցնել 54 ղրանով, և ժողովուրդը անմռունչ հնազանդում է: Քիւրդ աշիրաթների ձիաւորները շատ նեղութիւն են տալիս բնակիչներին:

---

*) Մկրտիչ քահ. Տէր-Գրիգորեան իր ընտանիքով և Միսակ Մալոյեան իր ընտանիքով։

Օսմանեան զօրքի մտնելու երկրորդ օրը տեղական հայերը, պ. պ. Պօղոս Տէր-Յովհաննիսեանցի և Մելքոն Կիրակոսեանի առաջնորդութեամբ, Ուրմիի և Համադանի շիա վաճառականների հետ միասին, գնացին ներկայանալու Ֆէրիկ փաշային, որ նրանց սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց և ապահովեցրեց, որ ոչ մի վտանգ իրանց չէ սպառնում, թող զբաղվեն իրանց գործերով: Խօսակցութեան մէջ նա ասել էր, թէ «շատ լաւ եղաւ, որ Ֆարմանը հեռացաւ քաղաքից. աւելի լաւ կը լինէր, եթէ, լսելով իմ բարեկամական խորհուրդներին, Միանդաբից եկած չը լինէր»: Ապա աւելացրել էր. «Շատ ցաւալի է, որ աջամները (պարսիկները) վատ օրէնքներ ունէք, յանցաւորին իբրև պատիժ կտրում էք ոտքը, ձեռքը, քիթը, մեղաւորներին գլխատում էք: Ֆասղչում ինձ մօտ եկան այդպէս քթատ, ոտքը, ձեռքը կտրած մարդիկ, և ես խղճալով նրանց ռոճիկ նշանակեցի. դուք մինչև անգամ կանանց ծիծն էք կտրում, որ կատարեալ վայրենութիւն է, բայց մեր օսմանեան հովանու տակ այսուհետև անդորր և խաղաղ կապրէք, որովհետև մենք արդարութեամբ կը կառավարենք ձեզ»:

Զ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

10 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կոմս Ալէքսէյ Բոբրինսկու նախագահութեամբ բացվեցին միացեալ ազնուական ընկերութիւնների համագումարի նիստերը: Ժողովվել են 137 լիազօրներ 30 նահանգների ազնուականութիւնների կողմից: Լիազօրների թւում կան նաև Պետական Դումայի և Խորհրդի անդամներից:

ԽԱՐԿՕՎ: Վախճանվեց համալսարանի ծերունի պրօֆէսօր, յայտնի կենդանաբան, հասարակական գործիչ և մանկավարժ Պավէլ Տիխոնովիչ Ստեպանովը:

ՏԱՄԲՕՎ: Տամբօվ-Կամիշինսկի երկաթուղագծի Օրլովկա կայարանի մօտ, 116-րդ վերստի վրա գտնվող տնակում, երբ ցերեկվայ ժամը 2-ին դրամատարը բաժանում էր բանւորների ռոճիկները, երեք չարագործներ, յանկարծ ներս խուժելով, դրամատարից յափշտակեցին 11,000 րուբլի. սպանվեց մի բանւոր: Յարձակվողները կտրեցին հեռագրաթելերը և հեռախօսը: Չարագործներից երկուսը ձերբակալվեցին, երրորդը անյայտացաւ: Հետապնդելու ժամանակ երկու չարագործներն էլ վիրաւորվեցին: Մեռաւ վիրաւորված ժանդարմը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ճանապարհների հաղորդակցութեան մասնաժողովը Դումային ներկայացրեց Ամուրի երկաթուղագծի կառուցման նախագիծը:

Արտաքին

ԲԵՐԼԻՆ: Վօլֆի գործակալութեանը Շանխայից հեռագրում են, որ կայսերական հրովարտակով պատուիրագրվում է կրճատել խաշխաշի մշակութիւնը ամբողջ Չինաստանում. Պէկինի կառավարութիւնը պարտաւորվում է կրճատել ափիոնի արտադրութիւնը Չինաստանում, նկատի առնելով որ Անգլիան համաձայնել է կրճատել ափիոնի ներմուծումը Հնդկաստանից:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

II խաղարկ. տարած և հանգած տոմսերը

սերիա	տոմսի	Շահած գումար	սերիա	տոմսի	Շահած գումար
19	06493	200000	31	00554	1000-ական ռուբլի
31	01402	75000	17	03431	
22	11362	40000	43	04393	
25	17321	25000	10	04451	
39	07544	10000	46	06437	
35	08259	10000	08	06637	
50	06038	10000	29	07405	
38	01599	8000	22	08041	
18	06650	8000	07	09039	
05	08226	8000	49	09940	
35	09138	8000	49	10489	
19	14410	8000	25	12156	
30	05502	5000	03	12192	
48	08633	5000	08	13570	
23	09022	5000	01	14293	
06	13585	5000	07	14658	
24	16127	5000	30	15666	
26	17008	5000	32	16768	
31	18370	5000	46	17013	
29	11280	5000	24	19065	

500-ական ռուբլի

սերիա	տոմս	սերիա	տոմս	սերիա	տոմս
5545	39	13566	16	8871	27
3387	40	18863	1	17088	11
12956	19	9817	17	5134	3
14762	20	618	4	593	6
13359	10	13588	15	8391	20
8418	4	15069	1	18967	36
7567	41	8786	1	4754	24
16361	50	14113	32	1888	43
12144	29	14219	15	5452	42
4979	40	15434	43	6486	27
1080	4	9119	5	11919	13
15337	42	3307	1	19127	19
9666	22	3499	45	8371	41
17185	29	8560	16	18995	25
12931	3	5980	19	19678	8
396	15	5383	39	15480	23
57	33	1281	14	4797	26
14665	37	15433	18	11127	13
15963	49	3241	41	3086	2
11461	4	11767	49	5160	20
8375	3	399	13	5366	34
14492	13	13650	9	14687	34
3342	44	13252	19	19152	43
4313	35	13380	4	996	14
157	36	2007	28	11979	37
17927	5	9633	35	14381	3
3631	3	3002	36	19960	14
9267	13	11188	45	3568	5
17184	5	13625	49	14260	31
7194	21	6269	18	10357	11
3645	27	7902	23	3520	40
10954	21	1881	5	10530	25
5966	18	579	17	4768	19
2505	19	5845	40	11999	41
240	48	7539	10	13343	13
9568	46	3756	18	14701	28
16719	9	16930	41	4280	39
5186	30	12712	45	11734	33
13064	16	6357	25	3909	5
19356	43	16086	43	3239	17
18849	19	4353	8	15495	10
16422	12	8858	23	5785	33
13595	21	984	14	2301	40
18759	42	18908	32	12180	4
4939	14	7906	13	3980	19
17181	6	1253	38	17038	6
14344	3	3229	49	10154	11
19484	18	10520	50	14171	26
17885	21	19455	33	7199	49
13768	36	15735	7	551	39
12715	44	7708	8	11399	16
11414	24	17406	3	17437	32
3607	12	17366	23	6251	38
8117	31	13566	37	11003	16
14624	33	5327	45	20000	28
4264	43	1092	19	19788	26
14642	13	16154	46	19499	30
15085	31	5051	44	17915	6
13564	12	3206	3	3212	43
14215	44	12248	14	684	40
5769	15	19748	45	6953	41
19316	45	9516	26	16852	36
12874	34	9911	16	11287	47
7352	5	12712	38	1095	44
2905	22	2360	16	19310	13
1522	6	11809	34	14957	15
6567	15	9061	32	3090	4
11375	50	10287	32	14235	28
5801	45	18365	5	1126	7
17312	48	18084	17	11331	34
15481	4	17626	12	3551	6
8737	31	59	38	9026	27
2511	20	13286	29	10285	39
4768	20	13737	39	11003	26
16278	21	3372	36	9119	18
8111	10	6875	25	5160	27
13871	33	5468	47	18288	16
3579	10	12595	23	17403	4
2145	3	15475	28	19967	17
12684	39	2987	29	6993	35
4359	20	5010	50	214	39
15380	47	15242	7	990	15
2920	4	15468	36	9148	13
14989	30	14275	25	10641	20
1895	44	14184	41	7808	40
2576	47	8076	48		
4775	10	5427	7		

Հանգուցման տիրաժ դուրս եկան սերիաների հետևեալ №№-ները.

4284, 935, 16183, 10984, 11364, 516, 17910, 15857, 17936, 8411, 19730, 7068, 13212, 6600, 9988, 17917, 18181, 18937, 22, 13787, 11700, 557, 3909, 11687, 6559, 16587, 18216, 15995, 5387, 4842, 6503, 2232, 11861, 13590, 11992, 15439, 16204, 3575, 6071, 7540, 1339, 15102, 3307, 1957, 6871, 11365, 1391, 1229, 8344, 15431, 2705, 18570, 14196, 11369, 13070, 19984, 17205, 997. 13587, 19121. 16355, 19685, 18711, 11857, 18713, 4264. 14053, 3641, 1054, 11002, 16820 14326, 9020, 1266, 11617, 1808, 15823, 13199, 9189 12071, 3794, 18780, 13818, 9696, 10566, 9341, 2556, 5544, 18136, 5394, 6820, 1710, 18366, 18532. 5165, 14862, 11527, 673, 19079, 7533, 19674, 7514, 9664, 15864, 12725, 12313, 18606, 16871, 17238, 12140, 3486, 8533 10736, 11459, 1314, 16583, 1627, 6766, 4161, 13962, 12574, 15685, 18753, 4867, 14804, 1, 4496, 9991, 3137, 6060, 2179, 2295, 7719, 4515, 1074, 1960, 4114, 14392, 8191, 5337, 1423, 3230, 9112, 17148, 17507, 19330, 5048, 5985, 14946, 9068, 7260, 19456, 9784, 5346, 14442, 8146, 10185, 5931, 14244, 5320, 395, 12455, 8150, 2191, 15812, 2274, 12924, 13276, 18428, 14211, 5229, 5246, 9000, 4356, 14097, 18503. 11713 16261, 19608, 11867, 618, 5969, 15561, 18602, 10707, 6826, 5896, 12282, 5198, 1447, 19417, 13956.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

11 մարտի 1908 թ.

Տոկոսաբեր արժէքղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	349 ր. — կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	261 ր. — կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	238 ր. 50 կ.
4⁰/₀ Պետական Ռենտա	76 ր. 25 կ.
5⁰/₀ փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	84 ր. 75 կ.
4¹/₂⁰/₀ փ. թ. Պետ. » » »	78 ր. 75 կ.
4⁰/₀ փ. թ. Պետ. » » »	72 ր. 75 կ.
3¹/₂⁰/₀ Գրաւ. թ. Պետ. » »	70 ր. 25 կ.
5⁰/₀ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	85 ր. 37¹/₂ կ.
4¹/₂⁰/₀ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	78 ր. 75 կ.
4⁰/₀ Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր. 25 կ.
5⁰/₀ Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր. 75 կ.
5⁰/₀ » » » » II	96 ր. 75 կ.
5⁰/₀ Արտաքին փոխ. 1906 թ.	94 ր. 87¹/₂ կ.

ԲՈՐՍԱ

Լօնդօնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր. 78 կ.
Բեռլինի վրա 100 մարկը »	46 ր. 81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր. 4 կ.
Նաւթ. Թղթ. Նօբել ընկ. »	11,325 ր. — կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4150 ր. — կ.
Բագուի ընկ. » »	516 ր. — կ.
Մանթաշեանի » »	160 ր. 50 կ.

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու	Բագուից Թիֆլիս
Արագ. գնչ. 12 ժ. 28 ր.	Արագ. երեկ. 5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ. 9 ժ. 41 ր.	Պօստ. ցեր. 12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ. 7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ. 4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում	**Բաթումից Թիֆլիս**
Մարդ. առաւ. 10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ. 10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ. 9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ. 6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ. 11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ. 5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երեւան	**Երեւանից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 8 ր.	Պօստ. ցերեկ. 1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ. 12 ժ. 52 ր.
Կարսից. Ալեքսանդ.	**Ալեքսանդր. Կարս**
Պօստ. երեկ. 5 ժ. 48 ր.	Պօստ. ցերեկ. 12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ. 5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ. 3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա	**Ջուլֆայից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ. 6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր. 6 ժ. 54 ր.

---

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9¹/₂—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9¹/₂—2 ժ. ատամի հիւ.

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1¹/₂ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1¹/₂—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հայոց Ներկայացում
Հինգշաբթի, մարտի 13-ին
ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Յօգուտ
հանգուցեալ դերաս. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ընտանիքի

Առաջին անգամ

Պարոն կառավարիչ

Կօմ. 3 գործ. Բիսսոնի, թարգմ. Ա. Վրոյրի

Մասնակցում են տ. տ. Մայսուրեան, Մելիքեան, Նոնիկեան, Յասմիկ, պ. պ. Տէր-Դաւթեան, Վանշիր, Վրոյր, Մամիկոնեան, Ռշտունի և ուրիշները:

Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում

Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան

Հայոց Դրամատ. Ընկ.—Թեան Վարչութ.

(չ. հ.) 2—1

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.

(ա. օ.) 100—10

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ“
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Այս միջոցը մի քանի օրում
բոլորովին ոչնչացնում է

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:

(10, 20 30) 50—5

Առաջին Կովկասեան Պահեստ

ՍԵՐՄԵՐԻ

ԼԱՐՇԷ

Գոյութիւն ունի 1872 թւից
№ 23, Միխայլովսկի պր., № 23
առաջարկում է

ՍԵՐՄԵՐ

ԼԱՒԱԳՈՅՆ ՏԵՍԱԿԻ
բանջարանոցի
ծաղիկների
խոտերի
ծառերի
[illegible]

Յայտնի ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ Բաղդադի: Տուփիցին է—6 մախալը—2 րուբլի: Գումարով գնողներին զեղչ:

(ա. օ.) 10—10

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

Գրավաճառանոցում վաճառվում են հետևեալ գրքերը

«Հարուստ. և աղքատ.»—Բախ. ր. տպ.	— 15
«Ժողովրդական փողեր»—Ս. Ֆէօդօրօվիչ	— 5
«Նոր լերան քարոզը»—Կարմելուկ	— 2
«Ազգային հարցը և սօցիալ-դեմօկրատիան»—Պերնեստորֆեր	— 5
«Գիւղացիներին» Պրանզօլինի	— 5
«Արհեստակց. միութիւն.»—Ե. Թոփչեան	— 15
«Ինչ է իրաւական պետութիւնը»—Նօվոտորժսկի	— 15
«Հողային հարցը Նոր-Զելանդիայում»—Կարանօվ	— 3
«Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ գրաւումը»—Ժ. Ժորէս	— 5
«Դեմօկրատիական ընտրութիւններ»—Ա. Աբեղեան	— 12
«Ազգութիւնների հարցը Ռուսաստանում»—Կարլ Կաուցկի	— 3
«Ազատութեան ճանապարհին»—Ա. Ահարոնեանի (Ղարիբ)—413 եր.	— 80
«Սահմանադրութեան էութեան մասին»—Ֆ. Լասսալ	— 5
«Ինչ է ժողովրդապետութիւն»—Վ. Գօլուբեվ	— 2
«Ժողովրդական օրէնսդրութիւնը Զւիցերիայում»—Ալֆօնս Դիւնան	— 20
«Ով ինչով է ապրում»—Դիկշտէյն	— 7
«Մի զրոյց հողի մասին»—Ն.	— 5
«Ագրարային ծրագրի հարցը և գիտական սօցիալիզմի տեսութիւնը»—Շիշկօ	— 7
«Կօօպերացիա»—Ա. Նիկօլաեվ	— 15
«Երկու ծրագիր»—Լ. Պետրօվ	— 20
«Պետական կազմ. հիմքերը արևմուտքում»—Ս. Վչօսէկ	— 12
«Գիւղաց. հարցը Ֆրանսիայում»—Ս. Ան...սկիյ	— 7
«Դաշնակց և նրա հակառակորդները»—(ծրագիր և տակտիկա) Մ. Յովհաննիսեան	— 50
«Տնտեսական զարգաց. և սօցիալիզմը»—Գէգ. և Լաֆարգ	— 5

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу.

2—1



ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ!

Տղամարդկանց գրպանի ժամացոյցներ բաց (ոչ ոսկեջրած), իսկական ամերիկական «Սօլօ» ոսկուց, գեղեցիկ քանդակով: 56 պրօբի ոսկու ժամացոյցներից մասնագէտն ևս չի զանազանի: Այդ ժամացոյցը «Anker» (և ոչ թէ ցիլինդր) լաւագոյն կօնստրուկցիան ունի, քոքվում է 36 ժամը մի անգամ, ամենաուղիղ և ճիշտ ընթացք: Երաշխաւորութիւն 6 տարով: Գինը 12 ր. տեղ միայն 3 ր. 25 կ., երկու հատը—6 ր., նոյնպիսիները, կանանց—4 ր.: Ձրի ուղարկվում են՝ 1) զրահաւոր շղթայ նոյն նիւթից, 2) բրելօկ-բինօկլ ամենագեղեցիկ, հեռաքրքիր տեսարաններով, 3) զամշի քսակ ժամացոյցը փչանալուց ազատելու համար: Հասցէ. Генеральное представительство часовъ «С О Л О». Т-во АПОЛЛО, ВАРШАВА М. 1-е почтовое отдѣленіе: Դարսելու և ուղարկելու համար մէկ կամ չորս ժամացոյցի համար—50 կ., Սիբիր—75 կ., առանց կանխավճարի Սիբիր չէ ուղարկվում: Ուղարկում ենք վճարովի վճարով: Գրագրութիւն ռուսերէն և գերմաներէն լեզուներով:

(12, 20) (10,074) 2—1

Զգուշացէ՛ք կեղծումներից

САНТАЛЪ МИДИ.

Պահանջե՛ք գրված լինի „Midy"

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

(Թոյլատրված Ռուսաստանում)

Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդին, պերելօյի (հօնօրրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար:

Սանտալ Միդիի յատկութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը թոյլատրում են գործածել առանց վախենալու մարսողական գործարաններին:

Պահեստը Ռուսաստանի գլխաւոր դեղատներում:

(չ. 1 ան. չ.) 25—17

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Банкская з. д. Семинаріи № 3.